

ԵՐԱԿՐԻՆՅԱՆ ԱՅԿԱԿՄԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒՍ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇԽ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՇԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

15 Նոյեմբերի

Ուրուգվայի զբոսաշրջության եւ սպորտի նախարարին



տությունը փոխանցեց երկրի պետական իշխանություններին՝ հայ ժողովրդի զավակների հանդեպ ցուցաբերվող հոգատարության համար: Ամենայն Հայոց Հայրապետը մասնավոր գոհունակությամբ ընդգծեց, որ Ուրուգվայն առաջին երկիրն է, որ ճանաչել է դատապարտել է Հայոց ցեղասպանությունը, ինչն արտահայտությունն է հայ ժողովրդի հանդեպ տածած սիրո, հարգանքի եւ գնահատանքի:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաեւ Հայաստանի եւ Ուրուգվայի բարեկամական հարաբերությունների մասին, որոնք զարգանում են՝ ընդգրկելով գործակցության նորանոր ոլորտներ:

Իր հերթին Լիլիամ Զեշիշյանն ուրախություն հայտնեց համայն

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ուրուգվայի զբոսաշրջության եւ սպորտի նախարար Լիլիամ Զեշիշյանի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արա Պետրոսյանի:

Ողջունելով նախարարի այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախություն հայտնեց, որ հայ ժողովրդի զավակներն օգտաշատ ծառայություն են բերում եւ պետական բարձր պաշտոններ զբաղեցնում Ուրուգվայի պետական կյանքում՝ հարգանք ու պատիվ հավելելով մեր ժողովրդի բարի անվանը: Ապա անդրադառնալով Ուրուգվայի հայ համայնքային կյանքին՝ Նորին Սրբությունն իր երախտագի-

հայության հոգեւոր կենտրոնում հյուրընկալվելու առիթով: Նախարարը կարեւորեց երկու երկրների ջերմ գործակցային հարաբերությունների ամրապնդումը տարբեր բնագավառներում, մասնավորապես՝ տուրիզմի զարգացման ոլորտում:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետն իր ողջույնները փոխանցեց Ուրուգվայի նախագահ Խոսե Մուխիկային, ում հետ հանդիպել էր Ուրուգվայ կատարած իր ավագ պետական այցի ընթացքում: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր մաղթանքները հղեց Ուրուգվայի հայ համայնքին՝ հորդորելով շարունակել ամուր ու հաստատուն պահել համայնքային կյանքը եւ կարեւոր ներդրում ունենալ Ուրուգվայի կյանքում:

27 Նոյեմբերի

Իսպանացի կաթոլիկ ուխտավորների



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց իսպանացի կաթոլիկ ուխտավորների՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետությունում Իսպանիայի Թագավորության պատվավոր հյուպատոս Արմինե Ադամյանի:

Տիկին Ադամյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց հյուրերին եւ նրանց այցելության նպատակը, այն է՝ խորապես ճանաչել Հայաստանը՝ որպես հարուստ մշակույթ ունեցող հնագույն քրիստոնյա երկիր:

Ողջունելով ուխտավորներին՝ Նորին Սրբությունը նրանց ներկայացրեց Հայ Եկեղեցու պատմությունը: Անդրադառնալով հայ ժողովրդի կյանքում Հայոց Եկեղեցու ունեցած առանձնահատուկ դերակատարությանը, Մայր Աթոռի քարոզչական գործունեությանն ու հոգեւոր-կրթական աշխատանքներին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց Եկեղեցու առաքելության կարեւորությունը հատկապես բազում մարտահրավերներով լի ներկա ժամանակաշրջանում:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց ուխտավորների հարցերին, որոնք վերաբերում էին Հայ եւ Կաթոլիկ Եկեղեցիների հարաբերություններին, հասարակության հոգեւոր կյանքին ու Հայոց ցեղասպանության ճամբարների եւ դատապարտման գործընթացին:

Շքանշանների հանձնման արարողություն Մոսկվայի առաջնորդանիստ Ս. Պայծառակերպություն եկեղեցում



Նոյեմբերի 16-ին Ս. Ս. Օ. Ս. Տ. Գաբրիել Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմ: Նոյեմբերի 17-ին Մոսկվայի առաջնորդանիստ Ս. Պայծառակերպություն Եկեղեցում տեղի ունեցավ շքանշանների հանձնման հանդիսավոր արարողություն:

Հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Նորակառույց տաճարում մատուցվեց Պատարագ, որի ավարտին Վեհափառ Հայրապետը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» եւ «Սուրբ Ներսես Շնորհալի»

Պարգևների հանձնումից հետո ներկաներին հայրապետական իր օրհնությունն ու պատգամը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «...Այսօր ուրախություն է մեզ համար, որ մեր Եկեղեցու հավատավոր զավակներին արժանին մատուցեցինք եւ նրանց կուրծքը զարդարեցինք մեր Եկեղեցու բարձր պարգևներով, քանզի իրենց արդար վաստակի արդյունքն ընծայաբերում են բարին արարելու, Հայրենիքը շենացնելու, Եկեղեցին պայծառացնելու նվիրական սուրբ գործի համար: Արադարեւ, շքեղաշուք այս կառույցը, աղոթքի այս տունը փառաբանություն



պատվի բարձր շքանշաններ եւ օրհնության գրեր հանձնեց Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի 122 բարերարի՝ ի գնահատություն նրանց ազգօգուտ եւ եկեղեցաշեն գործունեության: Ս. Խորանից հայրապետական սրբատառ կոնդակներն ընթերցեց թեմակալ առաջնորդ Եգրաա արք. Ներսիսյանը:

Է ինչպես մեր ազգի, այնպես մեր բարերար զավակների համար»,- նշեց Նորին Սրբությունը՝ գոհունակություն հայտնելով, որ այսօր մոսկվաբնակ հայորդիները հնարավորություն ունեն փառահեղ Ս. Պայծառակերպություն Եկեղեցում աղոթելու եւ մասնակցելու սրբազան արարողություններին: Շարունակությունը՝ էջ 2

Շքանշանների հանձնման արարողություն Մոսկվայի առաջնորդանիստ ...



Սկզբը՝ էջ 1

Վեհափառ Հայրապետն իր խոսքում գնահատանքով հիշեց լուսահոգի Մուրադ Սարգսյանին և Մերուժան Լալայանին, ովքեր նույնպես ժամանակին իրենց կարեւոր մասնակցությունն էին բերել առաջնորդանիստ եկեղեցու շինարարական աշխատանքներին: Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց նաեւ թեմակալ առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանին՝ թեմի հոգեւոր կյանքի աշխուժացման և եկեղեցական համալիրի կառուցման համար:

Այնուհետեւ այս ուրախալի առիթով եկեղեցական համալիրի սեղանատանը տեղի ունեցավ ցերեկույթ, որի ընթացքում գեղարվեստական կատարումներով հանդես եկան Մոսկվայի հայորդյաց տան «Ուսանա» երգչախումբը՝ խմբավարությամբ Լենա Բեգլարյանի, «Ակունք» ժողովրդական գործիքների եւ «Կոչնակ» դիվախարների խմբերը, ինչպես նաեւ՝ «Հայասա» պարային համույթն ու մանուկների պարային Նորաստեղծ խումբը:

Հանդիսության ընթացքում բարերաներին գնահատանքի

խոսք ասաց Եզրաս սրբազանը: «Հոգու ուրախություն է մեզ համար, որ եկեղեցասեր ոգին գործել է ձեռք ասաց հայորդիների սրտերում և ծնունդ է տալիս բարի իրագործումների, որի ականատեսն ենք այսօր մենք բոլորս»,- ասաց սրբազան հայրը՝ մաղթելով, որ Տիրոջ հովանավոր Աջը միշտ զորավիգ լինի նրանց՝ նույն եռանդով շարունակելու եւ բարի գործերով շենացնելու Մայր Եկեղեցին:

Երախտագիտության խոսքով հանդես եկան ազգային բարերարներ Ռուբեն Գրիգորյանը, Սամվել Կարապետյանը, ՌԴ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Օլեգ Եսայանը, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ Արթուր Զիլինգարովը:

Հանդիսության ավարտին ներկաներին վերստին իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Հայրապետը:



Ի Տեր հանգավ Արսեն արք. Բերբերյանը



Նոյեմբերի 16-ին՝ կյանքի 76-րդ տարում, վախճանվեց Մայր Աթոռ Սբ Էջմիածնի երիցագույն միաբաններից Արսեն արք. Բերբերյանը:

Հանգուցյալ սրբազանի աճյունը նոյեմբերի 18-ին դրվեց Ս. Գայանե վանքում՝ վերջին հրաժեշտի համար, Ժ. 18-ին կատարվեց եկեղեցու կարգ: Նոյեմբերի 19-ին՝ սբ Պատարագի ընթացքում, կատարվեց վերջին օծումը: Դամբանական խոսք ասաց պատարագիչ Հովակիմ եպս Մանուկյանը, ով անդրադառնալով հանգուցյալ սրբազանի կյանքին եւ

գործունեությանը՝ Նշեց, որ Արսեն սրբազանը տասնամյակներ շարունակ անձնուրաց կերպով ծառայել է Հայ Եկեղեցուն՝ իր նկատելի ներդրումն ունենալով մասնավորաբար հայ եկեղեցական երաժշտության բնագավառում, ինչպես նաեւ՝ հովվական ու հասարակական մի շարք այլ ոլորտներում: Խոսքի վերջում Հովակիմ եպս Մանուկյանը Հայ Եկեղեցու հոգեւորականաց դասի եւ բարեպաշտ հավատացյալների անունից իր ցավակցությունը հայտնեց Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետին եւ Արսեն սրբազանի հարազատներին:

Իսկ Պատարագի ավարտին, նախագահությամբ Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Գրիգորիս արք. Բունիաթյանի, կատարվեց հանգուցյալ սրբազանի թաղման կարգը եւ հուղարկավորության արարողությունը: Արսեն արք. Բերբերյանի աճյունն ամփոփվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանատանը:

Հուղարկավորությանը մասնակցում էին Հայ Առաքելական Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, տարբեր թեմերի հոգեւոր սպասավորներ, հավատացյալներ, ինչպես նաեւ՝ սրբազանի հոր մտերիմները եւ հարազատները:

«Յիշատակ արդարոյն օրհնութեամբ եւ ռիցի»:

Հոգեհանգստյան պաշտոն՝ Դամասկոսի Սրբոց Թարգմանչաց ճեմարանի անմեղ զոհերի համար

Նոյեմբերի 17-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում Պատարագի ավարտին կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Դամասկոսի Սրբոց Թարգմանչաց ճեմարանի մոտ Նոյեմբերի 11-ին տեղի ունեցած ահաբեկչական գործողության հետեւանցով զոհված հայ երեխաների համար:

Մինչ հոգեհանգիստը՝ հավուր պատշաճի խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի միաբան Ռսկան արք. Գալիաքյանը: Սրբազանը սրտի մեծ ցավով ու կսկիծով անդրադարձավ տեղի ունեցած ողբերգությանը: Սրբազան հայրը խստագույնս դատապարտեց նմանօ-

րինակ անմարդկային գործողությունները՝ Նշելով, որ երեխաների սպանությունը գերագույն ոճիր է, քանի որ վերջիններս, անկախ իրենց կրոնական պատկանելությունից, պիտի վայելեն ամենքի խնամքն ու պաշտպանությունը:

Հոգեհանգստի ծնողներին ու հարազատներին փոխանցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցությունները՝ Ռսկան սրբազանը հոգեւորականաց դասին ու ներկա բոլոր հավատացյալներին հրավիրեց անմեղ զոհերի հոգիների հանգստության համար կատարվելիք միասնական աղոթքի:

Մարկելին ՕԼԵՍԵԻՅԿԻ

Սկզբը՝ թիվ 20-21

Ե) Բրիստոնյայի կյանքի խոչընդոտները

Սեփական անձի փրկության եւ սուրբ կյանքով ապրելու համար քրիստոնյայից պահանջվում է հարթել բոլոր թշնամիներին եւ շրջանցել նրանց որոգայթները: Հովհաննես առաքյալը հավաստիացնում է, որ նման կյանք հնարավոր է. «Որոյակներ, ...հաղթեցինք նրանց, որովհետեւ հոգին, որ ձեր մեջ է, ավելի մեծ է, քան նա, որ կա աշխարհի մեջ» (Ա Հովհ. Դ 4): Պողոս առաքյալն ասում է. «Բայց հավատարիմ է Աստված, որ ձեզ ավելի փորձության մեջ չի գցելու, քան կարող եք տանել, այլ փորձության հետ փրկության ելք էլ է ցույց տալու, որպեսզի կարողանաք համբերել» (Ա Կորնթ. Ժ 13), իսկ փիլիպեցիներին ուղղված նամակում այսպես է գրում.

«Եվ ահա ես աղոթք եմ անում. թող ձեր սերը ավելի եւ ավելի առատանա գիտության եւ ամենայն իմաստության մեջ, որպեսզի դուք լավն ընտրեք, հաստատուն մնաք եւ առանց գայթակղության լինեք Բրիստոսի օրվա համար» (Փիլիպ. Ա 9-10): Սակայն, ցավոք, հնարավոր են նաեւ այնպիսի դեպքեր, երբ բարոյապես վերածնվածն ուժասպառ է լինում պայքարի ժամանակ եւ ընկնում: Նման դեպքերն ի նկատի ունենալով՝ Պողոս առաքյալը պատգամում է մեզ փրկության համար աշխատել «ահով եւ դողով» (Փիլիպ. Բ 12): Անկումները լինում են տարբեր: Լինում է անկում, որից հետո քրիստոնյան նորից ոտքի է կանգնում, արցունքներով լվանում է այդ մեղքի հետքը եւ հզորանալով շարունակում է պայքարել՝ հավատալով Աստծու ներողամտությանը եւ ողորմածությանը: Լինում է անկում, որից հետո մարդը շարունակում անհոգորեն մնալ մեղքի ախտի մեջ: Լինում է անկում, որն անգուցության հետեւանք է, կամ էլ այնպիսի անկում, որը հետեւանք է հաճույքի եւ մեղքի հանդեպ ներքին համակրանքի:

Վերջինս հետեւանցով վերանում է հակումը՝ հոգեւոր բարիքների նկատմամբ, կորչում է Աստծու շնորհը, եւ արդյունքում վերադառնում այն վիճակին, որը դարձի գալուց առաջ էր: Նման անկման դեպքում քրիստոնյան պետք է կրկին անցնի դարձի ողջ գործընթացը՝ համաձայն վերոգրյալի: Եթե մեղավորը չի զդրում, ապա մեղք է գործում Սբ Հոգու հանդեպ, հետեւաբար կործանվում է: Ի տարբերություն մկրտությամբ վերածննդի, որն անկրկնելի է, դարձի գալը՝ ապաշխարելը, կրկնելի է: Հնարավոր են դեպքեր, որոնք հաճախակի են կրկնվում (Աստված մեղավորի մահը չի ուզում), սակայն հնարավոր են դեպքեր, երբ մարդը, առաջին անգամ հեռանալով Աստծուց, կործանվում է: Այնուամենայնիվ, Փրկիչը մասնակցում է այն մեծ վտանգը, որին մարդը ենթակա է, երբ դառնում է դեպի Աստված. «Եթե պիղծ դեղը ելնում է մարդուց, շրջում անջրդի տեղերում, հանգիստ է փնտրում եւ երբ չի գտնում, ասում է՝ վերադառնալ իմ տունը, որտեղից եկա: Եվ գալիս է ու գտնում այն՝ մաքրված եւ կարգի բերված: Այն ժամանակ գնում եւ վերցնում է իրենից ավելի չար յոթ այլ դեղերի եւ մտնում, բնակվում է այնտեղ. եւ այն մարդու վերջին վիճակը լինում է ավելի վատ, քան նախկինը» (Ղուկ. ԺԱ 24-26):

Որքան անկեղծ եւ խոր է քրիստոնյայի դարձի գալը, այնքան անհնարին են նրա՝ Աստծուց հեռանալը եւ անկումը, եւ որքան մակերեսային է դարձը, այնքան ավելի արագ է Աստծուց հեռացումը, եւ ավելի վտանգավոր՝ անկումը: Մեր Փրկիչ Հիսուս Բրիստոսի օրինակելի խոսքերն ավելի շատ ուղղված են թերահավատներին, այսինքն՝ Աստծուն

մակերեսայնորեն դարձածներին: Ավելորդ է խոսել այն մասին, որ ընկածներին հարկավոր է Աստծու աջակցությունը, եթե նրանք ցանկանում են դառնալ նախկին վիճակին: Դավիթ արքան դարձի չեկավ եւ անգամ չգիտակցեց իր մեղքը, մինչեւ Աստված նրա մոտ չուղարկեց Նաթան մարգարեն: Իսկ Պետրոս առաքյալն սկսեց դառնորեն արտասվել միայն այն ժամանակ, երբ զգաց Փրկչի պատժող հայացքը:

Կատարելության ձգտողներին հարկավոր է հեռու պահել կամ նախագգուշացնել առավելաբար երկու վտանգից, որոնց հիմնականում ենթարկվում են: Մի կողմից՝ դարձի գալուց հետո, զգալով կատարելության հասնելու համար պայքարի դժվարությունն ու ժամանակ առ ժամանակ աստվածային ուղուց շեղվելը եւ, վերջապես, պայքարում մի քանի անգամ կրած պարտությունը, քրիստոնյան հեշտությամբ տրվում է փոքրոգության եւ հուսալքվում: Մյուս կողմից՝ զգալով շնորհի առատությունը, պատերազմական դաշտում թշնամու



դեմ տարած հաղթանակը եւ հոգեւոր աճը՝ քրիստոնյան հեշտորեն տրվում է իրենից վտանգ ներկայացնող «փառաբանությանն» ու «հպարտությանը»:

Առաջին պարագայում քրիստոնյային անհրաժեշտ է հաստատականությամբ եւ հույսով լցվել ու հիշել Պողոս առաքյալի խոսքերը. «Չորացրե՛ք Տիրոջով եւ նրա զորության կարողությամբ» (Եփես. 2 10), «Ամեն ինչի կարող եմ նրա շնորհով, Ով ինձ գորադրեց» (Փիլիպ. Դ 13), եւ «Ամեն կողմից ճնշված, բայց ոչ ընկճված, կարոտյալ, բայց ոչ հուսահատ, հալածված, բայց ոչ լքված, չարչարված, բայց ոչ մեռած» (Բ Կորնթ. Դ 8-9), «Բոլոր դեպքերում դուք ձեզ ներկայացրե՛ք իբրեւ Աստծու պաշտոնյաներ՝ ցույց տալով մեծ համբերություն նեղությունների մեջ, վշտերի մեջ, չարչարանքների մեջ» (Բ Կորնթ. 2 4): Իսկ երկրորդ պարագայում հիշեցնենք Հակոբոս առաքյալի խոսքերը. «Տերն ամբարտավաններին հակառակ է, բայց խոնարհներին շնորհ է տալիս» (Հակ. Դ 6), ինչպես նաեւ Փրկչի խոսքերը. «Երանի հոգով աղքատներին, որովհետեւ նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. Ե 3): Զրիստոնեական նկարագիրը պահպանելու եւ զարգացնելու համար ամենից շատ ու ամենից առաջ պետք է ունենալ հնազանդություն, որը լիովին հավասար է քրիստոնեական գործությանը. «Երբ ես տկար եմ, այն ժամանակ եմ գորավոր» (Բ Կորնթ. ԺԲ 10), «Եվ այդ լավ էլ է, որ ես պարծենամ իմ տկարություններով, որպեսզի իմ մեջ բնակվի Զրիստոսի զորությունը» (Բ Կորնթ. ԺԲ 9):

Շարունակելի
Ռուսերենից թարգմանեց
Օլգա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՋԻ (1780-1799)

Սկզբը՝ թիվ 11

Կ. Պոլսի մեծամեծների մի մասը Չաքարիայի գրած նամակին համաձայն չէր, եւ դրան միացան նաեւ կաթողիկոսները: Չիքոլների թիվը գնալով մեծացավ, բոլորին դուր եկավ Ղուկասի բռնած խոհեմ եւ հեզ դիրքը, ինչպէս նաեւ՝ կաթողիկոսությունից հրաժարվելը: Սակայն Չաքարիան անդրդվելի էր: Էջմիածնում Ղուկասն զբաղվում էր վարչական խնդիրներով, բայց կաթողիկոսական արտաքին ձեռք չէր պահում: Արտաքինապետ նա տեղապահ էր: Այս կացությունը շարունակվեց մինչեւ 1781 թ. գարուն, երբ Չաքարիայի՝ պատրիարքությունից դուրս գալը վիճակը փոխեց:


Չիլիֆտար Մեհմեդ վեզիրի օրոք Չաքարիան ստիպված եղավ մեղմել իր դիրքը հռոմեադավանների նկատմամբ: Դրանից վերջիններն ակտիվացան եւ սկսեցին ըստ իրենց անխորժակի կատարել արարողությունները: Անկյուրացիները կարողացել էին տեղական իշխանություններին իրենց կողմը գրվել եւ տիրանալ չորս եկեղեցու: Դա ուղղված էր պատրիարքության դեմ, եւ Չաքարիան ժողով գումարեց եւ ժողովական որոշմամբ դիմեց կառավարությանը, իսկ Չիլիֆտարին էլ հրովարտական արձակեց՝ չորս եկեղեցիները վերադարձնել Զայոց եկեղեցուն: Զրամանի համաձայն՝ կաթողիկոսները պետք է պատժվեին: Չաքարիան չուզեց

հրովարտակն ստանալուց անմիջապէս հետո բռնել ձեռնարկների դիմել: Նա գրեց առաջնորդ Ստեփանոս վարդապետին, որ նա հրապարակի հրովարտակը եւ հռոմեադավաններին հնազանդության բերի: Սակայն սրանք, ունենալով տեղական իշխանությունների աջակցությունը, հրաժարվեցին: Ցավոք, այդ օրերին մահացավ Ստեփանոս վարդապետը, որի փոխարեն ուղարկվեց Աբրահամ վարդապետը՝ նույն հրահանգով, սակայն Նրան էլ չանսացին:

Զարկ եղավ դիմել իշխանությունների օգնությանը: Անկյուրիա ուղարկվեց Բանդրամայի առաջնորդ Պողոս վարդապետը՝ իբրեւ կարող մարդ: 1791 թվին մահացավ Չիլիֆտար վեզիրը, եւ պաշտոնն անցավ Զաբուտան Զասան փաշային, քանի որ մեծ վեզիր Իզզեթ Մեհմեդ փաշան գտնվում էր Կարնում, եւ մինչեւ նրա գալը՝ տեղապահ էր պետք: Պողոս վարդապետը հռոմեադավանների գլխավորներից չորս հոգու աքսորեց Սամսոն, սակայն եկեղեցիների խնդիրն առկա մնաց: Պողոսի դեմ գործելու մասին էլ լուրեր տարածվեցին: Պողոսը դիմեց պատրիարքին, եւ սա էլ կրկին ժողով գումարեց, եւ որոշվեց Նոր դիմում ուղղել մեծ վեզիրին՝ եկեղեցիները վերադարձնելու, ինչպէս նաեւ՝ Անկյուրիայից 12 հոգու հեռացնելու խնդրանքով: Միաժամանակ խնդրվում էր, որ մայրաքաղաքից էլ ո-

րոշ անձինք հեռացվեն, ինչը գործադրվեց 1781 թվի մարտին: Նրանց մի մասին աքսորեցին Ամասիա, իսկ մյուս մասին ուղարկեցին թիարան: Սակայն եկեղեցիների հարցը մնաց մեծ վեզիրի լուծմանը, որը մայրաքաղաք հասավ ապրիլի 5-ին:

Նոր մեծ վեզիրը պաշտպանեց պատրիարքարանին: Նա ձերբակալեց եւս երեք հոգու, իսկ երբ նրանց կանայք բողոքեցին, նրանցից էլ չորս հոգու բանտարկեց, բայց հետո տուգանքով ազատ արձակեց: Զատուկ պաշտոնյա ուղարկվեց Անկյուրիա՝ եկեղեցիների հարցը լուծելու: Դա էլ ավելի գրգռեց կաթողիկոսներին, որոնք դիմեցին Եվրոպական դեսպաններին, որ տապալեն Չաքարիայի պատրիարքությունը: Զաբուտան բաշի Մեհմեդը դեռ Նոր էր ճամփա ընկել Անկյուրիա, երբ իմացավ, որ Ամասիայից գաղտնաբար փախել է աքսորվածներից Զովհաննես Կըլըջջուլուն, ուստի նրան իր պաշտոնյաների միջոցով բանտարկել տվեց: Եսմա սուլթանուհու պալատի հետ հարաբերություններ ունեցող կաթողիկոսները սուլթանուհու պաշտոնյաներից Մեհմեդին ուղղված մի կեղծ գիր առան, իբր Եսման է գրել, որ Զովհաննեսին ազատի, քանի որ իրենց մարդն է: Սակայն Մեհմեդը կասկածեց եւ հարաբերություններ ունեցող կաթողիկոսները սուլթանուհին անգիտակ է, գործը մեծ վեզիրին հանձնեց: Եվ ոչ միայն Զովհաննեսին չարձակեցին, այլեւ խաբեության պատճառով գայրա-



ցած մեծ վեզիրն ավելի խիստ հրամաններ տվեց: Մեհմեդը 1781 թվի մայիսի 7-ին անցավ Սկյուտար եւ այստեղ իր կարավանի հետ ճամփորդելու եկած մեկին կասկածելի համարելով՝ հարցաքննեց, խուզարկեց եւ մուտը շատ նամակներ հայտնաբերեց: Դրանք գրված էին եվրոպական լեզուներով: Կասկածյալը խոստովանեց, որ դրանք Անկյուրիա տանելու համար իրեն եւ հանձնել Սոֆճի խան շուկայի դռնապանն ու բեռնակիրը: Նամակները բացվեցին եւ կարդացվեցին, եւ հետո նամակներն ու կասկածյալին Միքայել ամիրայի ձեռքով ուղարկեցին Չաքարիա պատրիարքին, որ իր հայեցողությամբ գործի: Վերջինս դրանք չբացեց եւ ետ ուղարկեց Միքայել ամիրային՝ ասելով, թե դրանք իրենց չեն վերաբերում, եւ կարող է վերադարձնել նրան, ումից ստացել է: Երկու օր անց Ավստիայի դեսպանատան թարգմանը գալիս եւ զանգատվում է, թե իրենց սուրհանդակին բռնել, նրա մոտ եղած նամակները բացել ու կարդացել են: Չաքարիան հերքում է այդ եւ եղելությունը պատմում Միքայելին: Սակայն Չաքարիային տապալելու դա-

վադրությունը վաղուց էր պատրաստված: Դեսպանը բողոքում է մեծ վեզիրին եւ իբրեւ հատուցում՝ պահանջում պատրիարքին պաշտոնական անել: Գործն ուսումնասիրվում է փոխանորդի միջոցով: Չաքարիան, Միքայելը եւ թղթատարը հարցաքննվում են, եւ բոլորի խոսքերը հաստատում են ճշմարտությունը: Մեծ վեզիրը դրա հիման վրա դեսպանի գրությանն ընթացք չի տալիս՝ ասելով, որ եթե դրանք դեսպանատան նամակները լինեին, այդպիսի անշան մեկին չէին հանձնվի: Դրանից հետո Ավստրիայի եւ Ֆրանսիայի դեսպանները միացած՝ ուղղակի դիմում են սուլթանին՝ պահանջելով Չաքարիայի պաշտոնականությունը: Սա էլ ենթարկվում է նրանց ու հրամայում պատրիարքին փոխել: Ժողովրդի դիմումներն օգուտ չունեցան, քանի որ խնդիրը քաղաքական երանգ էր ստացել: 1781 թվի մայիսի 29-ին Ղուկազի Իսմայիլ Էֆենդին զինվորներով եկավ պատրիարքարան եւ իրագործեց սուլթանի հրամանը եւ Չաքարիային անմիջապէս ուղարկեց Պոլսա: Զավաքված ժողովուրդը նրան իր հարգանքը մատուցեց, եւ պատրիարքն էլ ժողովրդին արձակեց միխթարական խոսքերով: Նա իրեն հաղթված չէր զգում, քանի որ նույն օրը լուր էր ստացել, որ Անկյուրիայում եկեղեցիները ետ են վերադարձվել ու հանձնվել Պողոս վարդապետին: Չաքարիային պատվով ուղարկեցին՝ ասելով, որ նա իզուր է ենթարկվել պատուհասի: 15 ժամ հետո նա հասնում է Մուղանիա, իսկ մայիսի 30-ին՝ ուշ երեկոյան՝ Պոլսա, որտեղ նրան էլ ժողովուրդը, եւ իշխանությունները ցույց են տալիս փառավոր ընդունելություն:

Շարունակությունը՝ էջ 4

«Լավագույն ուսուցիչ» մրցանակաբաշխություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում



Նոյեմբերի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Զայոց Կաթողիկոսի օրհնությամբ տեղի ունեցավ «Լավագույն ուսուցիչ» մրցույթի 2013 թվականի հաղթողների մրցանակաբաշխության հանդիսությունը:

«Լավագույն ուսուցիչ» ամենամյա մրցույթը Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եւ ԶԳ կրթության ու գիտության նախարարության համագործակցության շրջանակներում իրականացվում է արդեն 10 տարի: Այն կազմակերպվում է Մայր Աթոռի բարերար, ամերիկաբնակ Սիլվա Տեր-Ստեփանյանի հովանավորությամբ: «Լավագույն ուսուցիչ» մրցույթը, որին մասնակցում են Զայոց եկեղեցու պատմություն, Զայոց պատմություն, հայոց լեզու եւ գրականություն, բնագիտություն (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն) առարկաների ուսուցիչներ, ինչպէս նաեւ տարրական դպրոցների դասավարդներ, անց է կացվում ԶԳ բոլոր մարզերում եւ Երեւան քաղաքում՝ մարզային եւ հանրապետական փուլերով, որի արդյունքներն ամփոփվում են հանդիսավոր մրցանակաբաշխության ընթացքում:

Հանդիսությանը բացման խոսք ասաց Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարա-

կության կենտրոնի տնօրեն Վարդան վրդ. Նավասարդյանը: Զայր սուրբն անդրադարձավ մրցույթի նպատակին՝ խրախուսելու ուսուցչի եւ մանկավարժի աշխատանքը հայոց գավառների կրթության եւ դաստիարակության ազգային գործում, հայտնաբերելու այն ուսուցիչներին, ովքեր արժանի են մեծարանքի եւ գնահատանքի իրենց մարդակերտման վեհ առաքելության մեջ, նշեց նաեւ, որ եկեղեցին նմանօրինակ միջոցառումներով ու ծրագրերի իրականացումով կարելի է ազգային-հոգեւոր առողջ գիտակցությամբ երեխաների կրթության եւ դաստիարակության գործը՝ այդ առաքելության մեջ սերմանելով հայրենիքի ու Մայր եկեղեցու հանդեպ հավատարմության ու պատասխանատվության գիտակցությունը:

Այնուհետեւ հանդիսության կազմակերպիչներին ու մասնակիցներին Ամենայն Զայոց Կաթողիկոսի օրհնությունը եւ բարեմաղթանքները փոխանցեց Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գեւորգ Եպս Սարուհանը: Սրբազանը նշեց, որ Զայոց եկեղեցին մշտապես կարելի է կրթության նշանակությունը հայ ժողովրդի կյանքում՝ ընդգծելով, որ դարեր շարունակ հայոց վանքերը եղել են նաեւ դպրոցներ, մշակույթի ստեղծման եւ պահպանման կենտրոններ: Գեւորգ սրբազանը երախտագիտություն հայտնեց Ամենայն Զայոց Կաթողիկոսին՝ հայ ուսուցիչների հանդեպ ցուցաբերած հայրախնամ, բարի վերաբերմունքի համար, ապա շնորհակալություն հայտնեց նաեւ ԶԳ նախարարությանը՝ հատկապես վերջին տարիներին Զայ եկեղեցու հետ համագործակցության ոգին խորացնելու եւ զարգացնելու համար:

ԶԳ նախարար Արմեն Աշոտյանի անունից ողջույնի եւ շնորհավորանքի խոսք ասաց ԶԳ ԿԳ հանրակրթության վարչության պետ Նարինե Հովհաննիսյանը: Իր խոսքում նա մեծապես կարեւորեց Զայ Ա-



ռաքելական եկեղեցու եւ ԶԳ ԿԳ նախարարության միջեւ համագործակցությունը, ինչպէս նաեւ՝ կրթության գործում երեխաների հոգեւոր դաստիարակությունը: Շնորհավորելով ուսուցիչներին մրցանակաբաշխության առիթով՝ ԶԳ ԿԳ հանրակրթության վարչության պետն արդյունավոր աշխատանք մաղթեց նրանց:

Հանդիսության առիթով ԶԳ ԱԺ գիտության, կրթության եւ մշակույթի հանձնա-

ժողովի անունից ուսուցիչներին շնորհավորեց նաեւ ԱԺ պատգամավոր Կարինե Աճեմյանը:

Այնուհետեւ Գեւորգ Եպս Սարուհանն ու տիկին Նարինե Հովհաննիսյանը հաղթող ուսուցիչներին հանձնեցին մրցույթի մասնակցության վկայականներ, հոգեւոր գրականություն եւ դրամական պարգևներ:

Առաջին մրցանակի արժանացան Զայոց պատմություն առարկայի ուսուցչուհի Ռիտա Բոյախչյանը (Երեւանի թիվ 62 ավագ դպրոց), հայոց լեզու եւ գրականություն առարկայի ուսուցչուհի Նինել Սարգսյանը (ԶԳ Սյունիքի մարզ, Կապանի թիվ 2 ավագ դպրոց), ֆիզիկա առարկայի ուսուցիչ Զրահատ Մուղդալյանը (ԶԳ Տավուշի մարզ, Բերդավանի միջնակարգ դպրոց) եւ Վանաձորի թիվ 1 դպրոցի դասվար Գայանե Թամազյանը (ԶԳ Լոռու մարզ): Երկրորդ մրցանակ ստացավ յոթ, իսկ երրորդ մրցանակ՝ տասնչորս ուսուցիչ:

Միջոցառման ավարտին ելույթ ունեցան Արարատյան հայրապետական թեմի «Չանգակներ» եւ Էջմիածնի «Հրաչ եւ Սյուզան Թուֆայան» հայորդյաց տան երգչախմբերը:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Զայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են մի շարք եկեղեցականների նոր նշանակումներ:

Մայր Աթոռի միաբաններ Նարինե վրդ. Ավագյանը եւ Դետրոս աբեղա Ազարյանը հոգեւոր ծառայության են նշանակվել Իրաքի հայոց թեմում:

Եղիշե վրդ. Ավետիսյանը, ազատվելով Զայ եկեղեցու երիտասարդաց միավորման հոգեւոր պատասխանատուի պարտականություններից, ծառայության է կոչվել Շվեդիայի հայոց համայնքում՝ Կենտրոնական Եվրոպայի եւ Շվեդիայի հայրապետական պատվիրակի պաշտոնակատարի իշխանության ներքո:

Արարատ թեմ. Պողոսյանը նշանակվել է «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրեն:

Կարապետ վրդ. Հարությունյանն ազատվել է Գուգարաց թեմում ստանձնած պարտականություններից եւ ծառայության կոչվել Ֆրանսիայի հայոց թեմում:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՐԵԿԱՏԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳ



Ա. Պապայան

ԹԱՏԵՐԳՈՒԹՅՈՒՆ

1960-1980-ական թթ. առատորեն լույս տեսան նաեւ թատերգություններ, որոնց մի մասը բեմադրվել է հանրապետության թատրոններում: Այսուհանդերձ, ժամանակակից հայ թատերգությունը կարծես թե մեկուսացած լինի գրական ընդհանուր շարժումից: Այն ոչ մի անգամ չէր քաջալերվել բանավեճերի մեջ, ոչ էլ հայ թատերագիրները հանդես եկան տեսական-գեղագիտական հոդվածներով, որոնք կարող էին ունենալ ծրագրային նշանակություն եւ գեղագիտական ուղղվածություն: Ամեն ինչ ունեցավ խաղաղ, անաղմուկ ընթացք. ժամանակակից հայ թատերգությունը մամուլում իր արձագանքն ունեցավ սոսկ հերթական գրախոսություններով կամ թատերախոսություններով: Եվ դա այն դեպքում, երբ 1960-ական թթ. կեսերից չէին դադարում բանավեճերը պոեզիայի, արձակի եւ քննադատության հարցերի շուրջ: Ընդհանուր գրական շարժումից այս մեկուսացվածությունն է թերեւս պատճառը, որ վերջին երկու տասնամյակներին թեւեւ տպագրվեցին թատերգությունների բազմաթիվ ժողովածուներ, բայց գրականության այդ սեռը՝ իր տարբեր դրսևորումներով, հազվադեպ բացառություններով հանդերձ, չտվեց այնպիսի բարձր արժեքներ, ինչպիսիք տվեցին այդ նույն տարիների արձակն ու պոեզիան:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Այս վիճակն ինչ-որ չափով պայմանավորված է հայ գրականության նախորդ դարերի ու տարիների ժառանգորդական կարծրատիպով: Ավելորդ չէ այս կապակցությամբ մտաբերել, որ միջնադարում Հայոց Եկեղեցին արգելում էր թատրոնը՝ որպես սատանայության օջախ: Իսկ դա ավանդույթ է ձեռնադրում: 18-19-րդ դարերում, 20-րդ դարի առաջին տասնամյակներին թատերգությունը, ըստ էության, չի եղել հայ գրականության առաջատար սեռը: Թեւեւ հայ թատերգության ճանապարհը հարթել են Մխիթարյանները՝ իրենց կլասիցիստական ողբերգություններով, ապա եւ՝ Մ. Պեշկոպեցյանը, Պ. Դուրյանը, Գ. Սունդուկյանը, Զ. Պարոնյանը, Շիրվանզադեն, Լ. Շանթը, Վրթ. Փափագյանը, Դ. Դեմիրճյանը, Ե. Չարենցը, Ն. Չարյանը, բայց եւ հայ թատերգությունն ընդհանուր գրական-պատմական զարգացման մեջ, բացառությամբ Սունդուկյանի, Շիրվանզադեի, Շանթի, Դեմիրճյանի ստեղծագործության, միշտ էլ ավելի պակաս կշիռ է ունեցել, քան՝ պոեզիան ու արձակը: Ահա հաղթահարման ենթակա այդ ավանդույթը, դժբախտաբար, շարունակվեց եւ այս տարիներին: Դրանով հանդերձ՝ նախկինում հայ թատրոնը զգալապես ներգործել է հանրային ճաշակի վրա: Այդ բարի ավանդույթը վերջին տարիներին կորցրեց իր ուժը, եւ ժամանակակից հայ թատրոնը, դարձյալ չնչին բացառություններով, աստիճանաբար հեռացավ հանրային կյանքի վրա բավարար չափով ներգործելու իր անհրաժեշտ առաքելությունից:

1960-1980-ական թթ. հայ թատերագրությունը ներկայանում է թե՛ թատերագիրների՝ Գ. Տեր-Գրիգորյան, Ա. Պապայան, Գ. Հարությունյան, Ա. Արաքսյան, Գ. Յաղջյան, Ա. Շահինյան, Ժ. Անանյան, Ա. Բարսեղյան, Վ. Շողերյան, Գ. Գրիգորյան, Մ. Զոհարյան, Ա. Բաբայան, Գ. Սարգսյան, թե՛ առանձին արձակագիրների ու բանաստեղծների ստեղծագործությամբ: Վերջիններիս թվում են 2. Դարյանը, Գ. Բենը, Զ. Մաթեոսյանը, Պ. Չեթունցյանը, 2. Խալափյանը, Ա. Զա-

լանթարյանը, Ժ. Ավետիսյանը, Գ. Սարյանը, Վ. Դավթյանը, Ս. Հարությունյանը: Բացի այս հեղինակներից, ովքեր տպագրել են իրենց թատերգությունները, կան նաեւ այնպիսիները (Զ. Մելքոնյան, Վ. Պետրոսյան եւ ուրիշներ), որոնց գործերը թեւեւ բեմադրվել են հանրապետության թատրոններում ու հեռուստատեսությամբ, բայց չեն տպագրվել:

Հայ թատերգությունն այս տարիներին թեւեւ չնոռացավ, թե ինչ է դրաման ու ողբերգությունը, բայց եւ նախապատվությունը տվեց կատակերգությանը: Չմոռանալ, որ ընդգրկվող ժամանակաշրջանը զուգահեռաբար է լճացման տարիներին, երբ միշտ չէ, որ հնարավոր էր լուրջ ու ծանրակշիռ խոսակցություն ծավալել պատմության, հանրային ու անձնական կյանքին վերաբերող առանձին հարցերի մասին: Ուստի, թեւեւ ոչ միակ, համեմայն դեպս բանով ճանապարհը կատակերգությանն էր, ոչ թե դատավճռին ու ողբինը, ծիծաղին էր, ոչ թե սուր ու ճակատագրական բախումներինը. սուր եւ ճակատագրական բախումներից հեռու անվտանգ ընդհարումներին էր:

Թատերգության որեւէ տարատեսակի առավելությունը պայմանավորված է տվյալ շրջափուլում համեմատական կարեւորություն կամ իրագործման հնարավորություն ձեռք բերած նյութով: Կատակերգությունը բնորոշ է ժամանակակից կյանքի գեղարվեստական պատկերմանը, իսկ ողբերգությունն ու դրաման՝ առավելապես անցյալին:

Հայ թատերագիրներն անդրադարձել են պատմական եւ պատմահեղափոխական անցյալին, ժամանակակից կյանքի խնդիրներին՝ գեղարվեստական պատկերման նյութ ունենալով եւ առանձին մարդկային ճակատագրեր, եւ առանձին պատմահասարակական ու բարոյահոգեբանական հարցեր:

Ժամանակակից կյանքի գեղարվեստական յուրացումը, դրա բեմական տարբերակի վերստեղծումը եղել են առաջնային ու պայմանավորել 1960-1980-ական թթ. հայ թատերգության գլխավոր ուղղ-

վածությունը: Այս շրջանակներում առկա են եւ իրական ու պայմանական վիճակ ու համապատասխան հերոս, եւ գործողությունների բեմականացում, եւ երկխոսականացված մենախոսությունների խորհրդածական թատրոն:

Ժամանակակից կյանք. ինչպիսի՞ն է այն, ի՞նչ խնդիրներով, մարդկային նկարագրերի, հարաբերությունների, կենսական բախումների ի՞նչ էական բացվածքով է ներկայանում հանրության ուշադրությունը:



Ա. Արաքսյան

Ժամանակակից կյանքի գեղարվեստական պատկերման գործում կարելու տեղ ունեն իրականության առանձին թեթրությունների երգիծումը եւ ժողովրդական կյանքի բուն տարերքի բացահայտումը: Այս տեսակետից անդրադառնալով Գ. Տեր-Գրիգորյանի «Իմ խեղճ Պորտոս» (1977), Ա. Պապայանի «Մեծ հարսանիք» (1987) եւ Գ. Հարությունյանի «Խաչմերուկ» (1979), «Քո վերջին հանգրվանը» (1987) գրքերում գետնոված **կատակերգություններին:**

Շարունակությունը՝ էջ 6



Սկիզբը՝ էջ 3

Մյուս օրը Իսմայիլ Էֆենդին վերադառնում է՝ իր հետ բերելով Պրուսայի առաջնորդ Հովհաննես Համադանցի եպիսկոպոսին, որը պետք է հաջորդեր Չաքարիային: Նա հանդիսապես պաշտոնի անցավ հուլիսի 2-ին:

Իրադրությունն ամբողջությամբ փոխվեց: Կ. Պոլսում Ղուկասի նկատմամբ համակրանքը գնալով աճեց, եւ որոշվեց վերջ տալ նրա կաթողիկոսությանը դիմադրելուն: Ստացան օսմանյան իշխանության հաստատագիրը, եւ թրքահայերը ճանաչեցին Ղուկասի կաթողիկոսությունը: Դրանից հետո միայն Ղուկասը բազմեց հայրապետական գահին: Այդ կացության մեջ նա

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՂՈՒԿԱՍ Ա ԿՎՐՆԵՋԻ (1780-1799)

գտնվել էր մոտ տասն ամիս: Այժմ նա համարձակ անցավ իր պաշտոնին, թեւեւ մինչ այդ էլ զբաղվում էր վարչական գործերով:

Համադանցու օրոք կաթողիկոսության խնդիրն ավելի սրվեց: Նա փորձեց նրանց դեմ համառ պայքարել: Կարգադրեց նրանց պսակը չկատարել, մկրտությունն արգելեց, իսկ նրանց գլխավորներից շատերին թիաքարշության բանտ ուղարկեց: Կաթողիկոսության հետեւողների մեռելների համար սանդուղքի նման ճաղ կամ դագաղ չիկել տվեց եւ պատվիրեց, որ մեռելին դրա վրա կապած տանեն թաղեն: Կաթողիկները խիստ զոջացին Չաքարիայի պաշտոնակության համար: Համադանցին զգվեցրեց նաեւ յուրայիններին եւ դարձավ ազգի համար ատելի: Սակայն Չաքարիայի վտարումը լոկ մեծացրել էր Չաքարիայի նկատմամբ համակրանքը, եւ Համադանցին չկարողացավ երկար վայելել իր պատրիարքությունը: Վեց ամիս անց նրա դեմ սկսված հակառակությունն աճեց: Բոլորը կամենում էին նրան տալ պալլել: Դրա դեմն առնելու համար Համադանցին կարողացավ հրամանագիր ստանալ եւ շատերին քշեց թիաքարշության: Դա միայն մարդկանց զայրույթը մեծացրեց: Դիմեցին սուլթանին՝ պահանջելով նրա հրաժարականը եւ Չաքարիայի ետ վերադարձը: Առավել եւս, որ լուրեր տարածվեցին, թե Համադանցին դիմել է կա-

ռավարությանը՝ հորդորելով Չաքարիային Պրուսայից հեռացնել եւ ավելի հեռու տեղ աքսորել: Այս վիճակը տեւեց երեք ամիս: Համադանցին խաղաղ պաշտոնավարություն չունեցավ:

Այս ընթացքում Չաքարիան զբաղված էր Պրուսայի առաջնորդական գործերով: Ինչպես նշվեց, Անկյուրեղյում չորս եկեղեցիները վերադարձվել էին Հայոց Եկեղեցուն, շատերը կաթողիկոսությունից հրաժարվել էին: Կ. Պոլսում կառավարությունը հասկացավ, որ անհնար է Համադանցու պատրիարքությունը: 1782 թվի մարտի կեսերին հրամայվեց, որ Համադանցին պատրիարքարանը թողնի եւ գնա Քարթալ գյուղ, որը Մարմարայի ափին էր: Իսկ ժողովուրդն ազատ էր պատրիարք ընտրելու հարցում: Մեծամասնությունը որոշեց Չաքարիային ետ բերել աքսորից եւ կրկին պատրիարք դարձնել: Մեծ վեճից, որ հարկադրված էր եղել նրան ազատել պատրիարքությունից, հաճույքով տվեց իր համաձայնությունը, ձեռք բերեց սուլթանական հրովարտակը, ուղարկեց Չաքարիային, որն արքունական պաշտոնյայի ուղեկցությամբ եկավ մայրաքաղաք: Նրան պատվով ճանապարհեցին: Մեծ դժվարություններով՝ ենթարկվելով նախաբեկության՝ նա եւ նրա ուղեկիցներն ու զինվորները հասան Հարեմիսքելեսի

նավահանգիստ, որը մայրաքաղաքի դիմաց էր: Այստեղից էլ վեճի իրավիրակը նրան ուղեկցեց արքունի դուռ:

Մայրաքաղաքում ժողովուրդը, մեծավորները եւ անգամ այլ ազգերի ներկայացուցիչները նրան հանդիսավորապես դիմավորեցին: Նրան ընդունում է մեծ վեճից եւ իր ելույթում ասում, որ չիքվի եւ առաջվա պես խոհեմ լինի: Հետո նա պատիվներով ուղարկվում է պատրիարքարան, որտեղից դուրս էր եկել տասն ամիս առաջ՝ 1781 թվի մայիսի 21-ին: Նույնիսկ կաթողիկոսության հետեւողներն էին գալիս՝ նրան իրենց հարգանքը մատուցելու եւ իրենց զոջումը հայտնելու: Չաքարիան էլ, որ համառ էր իր հայադավանության մեջ, աշխատում էր նրանց քաղցր խոսքերով ետ բերել հռոմեադավանությունից: Նա թիարանից ազատել տվեց վերը հիշված չորս անձանց, որոնք Համադանցու զոհն էին դարձել: Սակայն քննադատություն եղավ, թե սկսել է գործել առանց մեծավորների: Որպեսզի այդ խոսակցությունները չընդլայնվեն, նա ժողով գումարել տվեց Գում-Գափուի Սբ Աստվածածին եկեղեցում՝ բոլորի մասնակցությամբ, որտեղ քննվեցին կարեւորություն ներկայացնող գործերը, այդ թվում՝ կաթողիկամետների նկատմամբ ունենալիք կեցվածքի խնդիրը: Ընդունվեցին համապատասխան որոշումներ, որոնք կաթողիկամետներին դուր չէկան. նրանք լավ հասկանում էին, որ այդ կանոններին ենթարկվելով՝ նրանք պարզապես չէին կարող հռոմեադավան մնալ:

Շարունակելի

**Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, պրոֆեսոր**

Հաղարծին վանքի 19-րդ դ. վանահայր վարդապետ Տեր-Մարգարյան (1830-1896)

Աղստեւ գետի հովիտը եւ նրա անտառապատ լանջերը կազմում են միջնադարյան Հայաստանի Գուգարքի նահանգի Կողբուփոր գավառի մի մասը: Հայաստանում քրիստոնեություն ընդունելուց հետո, ինչպես Հայաստանի այլ տարածքներում (Սեւան, Տաթև, Հաղպատ, Հոռոմոս, Սանահին), այնպես էլ այս հովտում լայն տարածում են ստանում վանական համալիրների կառուցումները՝ Հաղարծին, Գոշավանք, Զուխտակ վանք, Մաթոսավանք, Մակարավանք եւ այլն, որոնք դարձան Հայաստանի մշակույթի զարգացման հոգեւոր եւ գիտական կարեւոր կենտրոններ: Սակայն դարերի ընթացքում սելջուկների, թաթար-մոնղոլների իրար հաջորդող ասպատակությունները կործանարար հետք են թողնում նաեւ Հաղարծին վանքի կենսունակ կյանքի ընթացքի վրա: Սրբավայրերի հարատւությունը պահպանելու, ժողովրդին հավատ ներշնչելու եւ համախմբելու նպատակով նվիրյալ վանականների եւ նրանց միաբանության անդամների հետեւողական ջանքերով եւ մեծահարուստ իշխանների կողմից ցուցաբերված միջոցներով վերականգնվել են տաճարներն ու շինությունները, պահպանվել դրանց կենսունակությունը: Այդ մասին են վկայում նաեւ Հաղարծին վանքի եկեղեցիների վեմերին թողած արձանագրությունները, օրինակ՝ 1652 թ. Ստեփանոս եկեղեցու վեմին թիֆլիսեցի Հոգեջանի որդիների թողած արձանագրությունները, 1681 թ. թիֆլիսեցի մեծահարուստ Չիթախյան եղբայրների Սուրբ Աստվածածին եւ Սուրբ Գրիգոր եկեղեցիների վերանորոգումների վերաբերյալ արձանագրությունները եւ այլն: Չնայած կատարված բարենորոգումներին՝ Աղստեւի հովտի վանքերից շատերը դադարեցին գործելուց, հատկապես 1795-1797 թթ. Պարսկաստանի Աղա-Մահմեդ խանի՝ դեպի Կրաստան եւ Ղարաբաղ կատարած արշավանքների ժամանակ, որի հետեւանքով մեծ թվով բնակավայրեր հայազրկվեցին, իսկ Հաղարծին վանքը շուրջ 70 տարի մոռացվեց, բնությունն էլ իր գործն

արեց, վանք տանող ճանապարհները պատվեցին մացառներով եւ ծառերով՝ քողարկելով այն հայ մարդու աչքից՝ զրկելով նրան հավատացյալ շինականի խնամքից: Օգտվելով նման վնասից՝ մահմեդական ցեղերի խաշնարածները գրեթե ամբողջապես տիրում են վանքի տարածքին, օգտագործում շինությունները՝ որպես անասուններ պահելու վայր, աղտոտում եւ փչացնում հուշարձանները: Պատմական վանական համալիր Հաղարծինը կառուցվել է դարերի ընթացքում եւ համալրվել մի շարք շինություններով, եկեղեցիներով, դրանք են՝ Ս. Գրիգորը, Ս. Աստվածածինը, Ս. Գրիգորի կից գավիթ-գանձատունը (1212 թ.), սրան հարակից Կաթողիկե եկեղեցին, 1194 թ. Ս. Ստեփանոս եկեղեցին՝ արեւի փոքրիկ ժամացույցով, 1248 թ. Հովհաննես Արմանեցու կողմից՝ հռչակավոր սեղանատունը: Գավթին կից մատուռում էին հանգչում Գագիկ եւ Սմբատ թագավորների մարմինները (այժմ՝ Հաղարծին վերանորոգման ընթացքում, վերականգնվել եւ կառուցվել է գեղեցիկ նոր մատուռ): Վանքերի նման ծանր վիճակով անհաստացած էին Ս. Էջմիածինը, նրա հայրերը, սակայն երկրի քաղաքական վիճակի եւ պետականության տեսական բացակայության հետեւանքով անհնար էր կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել: Նման վտանգավոր ընթացքը կանխելու եւ հետագայում կործանումից ազգային պատմական շինությունները փրկելու նպատակով 1849 թ. հուլիսի 27-ին Ղազարի եւ Ծամշաղինի հայոց հոգեւոր գործերի վերատեսուչ Սարգիս Վարշամյանը դիմում է Կրաստանի եւ Իմերեթի հոգեւոր ատյանին ու բարձրացնում հարցը եւ խնդրում, որ՝ «Ղազարոյ եւ Ծամշաղինոյ սահմանաց որք են Գոշայ եւ Հաղարծնոյ վանորէ տիրեն տաճիկ ազգ պահելով ի նոսա զանասուն իւրանց աղտոյի առնելով զտաճարներն այդ, իսկ մյուս վանորէիցն որք են Մակարայ, Սրվեղայ եւ Խորանաշատայ են ի ձեռս հայոց, բայց ամայիք ու անապատք, խնդրեմ խոնարհաբար առ-



նել ի հոգատարութիւն» (ՀՀ ՊՊԱ, Ժ-53, ց-1, գ-90): Դա լուրջ ահազանգ էր՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար: Այդ տարիներին հանրությանը դեռ անծանոթ մի երիտասարդ հոգեւորական, որը Ս. Էջմիածնի միաբանության անդամ էր եւ լուսարար, հավանաբար ծանոթանալով գրության բովանդակությանը, հետագայում մեկնելով ու տեղում ականատես լինելով Հաղարծնի վանքի վատթար վիճակին, որոշում է հանձն առնել վանքի բարենորոգման առաքելությունը: Նա այդ առիթով Մատթեոս կաթողիկոսին է ներկայացնում վանքի վիճակի գրավոր նկարագիրը ու միեւնոյն ժամանակ խնդրում թույլտվություն՝ «մեկնել, մաքրել եւ յարդարել զայն տեղի սրբավայրը, եթե ոչ առաջին վեմումը, գեթ սրբունք եւ մաքրութեամբ պահպանուած վայրուցն- զայնու առիթ թերեւս լիցի զայն տեղի յապագա ժամանակս օգտակարս եւ պիտանիս Վասն ընդհանրական Աթոռաց Սուրբ Էջմիածնի ընծայի ցուցանիլ: Վասն հայցելով այսու աղերսագրութեամբ զմարդասիրական գուր եւ զազգասեր օժանդակկուք Ձեր յայս Աստուծահաճոյ գործ աղաչիմ ազատ կացուցանիլ զիս ի թուաց միաբանից Սուրբ Էջմիածնի եւ հրամայիլ ինձ զբնակուք իմ կալնուլ յայն մենաստան, որով իմ եւ եղեց յավիտիան զոհաբան զշնորհաց Ձերում վեհաստիճան օծութիւնը»: Ստանալով Վեհափառի օրհնությունը եւ

թույլտվությունը՝ 1862 թվին նա գալիս է այդ ամայի սրբավայրը եւ տեր կանգնում սրբավայրին ու դառնում երբեմնի հռչակ վայելով վանքի միակ վերակացուն ու նրա հոգեւոր զինվորը՝ չպատկերացնելով, թե ինչպիսի ծանր պարտականություններ է ստանձնել: Այստեղ երիտասարդ վարդապետին սպասում էին անչափ դժվարին եւ նույնիսկ անլուծելի թվացող բազմաթիվ հարցեր, խնդիրներ ու պահեր: Առաջին իսկ օրից նա բախվում է թաթարների համառ դիմադրությանը, սակայն սեփական անձը մի քանի անգամ վտանգելով՝ նրան հաջողվում է անօրեններին դուրս մղել վանքի տարածքից եւ ձեռնարկել նրա բարեկարգմանը: Մաքրում է տաճարները՝ տասնամյակների ընթացքում կուտակված աղբից, Ս. Ստեփանոս եկեղեցուն դուռ է դնում, գավթի տանիքին մի փայտյա գմբեթ պատրաստում, երկու զանգ կախում, գավիթն իբրեւ գանձակատուն ծառայեցնում: Կտրուում է ճանապարհաձած թփուտներն ու ծառերը, գետակի վրա կամուրջ է շինում, վանք գնալու հնարավորություն ստեղծում եւ այլ աշխատանքներ իրականացնում: Միեւնոյն ժամանակ ժողովրդին հորդորում, որ զան հանգրվանեն վանքում, զբաղվեն տնտեսական գործունեությամբ, օգնեն բարեշինությանը: Մարդիկ, ականատես դառնալով երիտասարդ վարդապետի ազգանվեր գործունեությանը, օգնության ձեռք են մեկնում: Սկսում են ուխտի գալ, պատարագներին մասնակցել, նվիրատվություններ անել եւ այլն: Ո՞վ էր այդ ազգասեր, սուրբ հավատքին ու հարազատ եկեղեցուն նվիրված հոգեւորականը: Այդ մարդը Մայր Աթոռի ժառանգավորաց դպրոցի նախկին սան, Էջմիածնի վարդապետ Պողոս Տեր-Մարգարյանն էր: Նա ծնվել է 1830-ին Զանաքեռ գյուղում, 1841-1848 թթ.՝ Ներսես Աշտարակեցու հայրապետության ժամանակ, սովորել է Մայր Աթոռի ժառանգավորաց դպրոցում, 1848-1858 թթ. եղել է Մայր վանքի վանական խորհրդի անդամ եւ լուսարար, 1851 թ. ստացել է ավագ սարկավագություն, 1856-ին՝ արքեպիսկոպոս, Մատթեոս կաթողիկոսի օրոք՝ 1859-1863 թթ., եղել է Գորու հովիվը, իսկ 1864 թ.՝ Բարձրագույն Սինդոնի անդամ: 1867 թ. Սինդոն նրան կարգում է Ղազարի գավառի հայոց վանքերի կալվածքների կառավարիչ եւ Հաղարծնի վանահոր պաշտոնակատար:

Շարունակությունը՝ էջ 7

Ն. ԲԵՐԴՅԱՆԷԼ

Սկիզբը՝ թիվ 21

Դրանից ի՞նչ է փոխվելու: Ես կարծում եմ, որ այժմ Ռուսաստանում հասարակական պայթյուզիան շատ ավելի է ուժգնացած, քան հասարակական ֆիզիոլոգիան, դա էլ մարդկային գիտակցության մեջ սրում է կրոնական խնդիրները: Կրոնը մշտապես կապված է աշխարհի պայթյուզիայի հետ (չարի գոյության փաստի հետ), եւ այդ պայթյուզիան, կրոնականից բացի, ոչ մի միջոցով չի բուժվում: Կյանքի հիվանդագին անտիկոմիան սրում է կրոնական գիտակցությունը, ծնում կրոնական ելքի ծարավ: Սակայն կրոնի արժեքը դրանից դուրս-ինչ չի խախտվում, այլ՝ ճնշտ հակառակը: Եվ ո՞վ է խնդրի լուծման դատավորը, ի՞նչն է պայթյուզիկ, եւ ի՞նչը՝ առողջ: «Պայթյուզիայի» գիտական որոշարկումը միշտ էլ հարաբերական է, պայմանական ու համեստ. այն ո՞չ լուծում է խնդիրը, ո՞չ էլ հարց բարձրացնում վերջնական արժեքի մասին: Անհամեստությունը, ինքնավստահությունը եւ մաքսիմալիզմի բացարձակությունը հասարակական երեւույթների պայթյուզիայի մասին խնդրի լուծման գործում ոչ մի ընդհանուր բան չունեն գիտության հետ, դա պարզունակ ինքնապարծություն է, նեղմիտ գնահատական, կրոնական հավատքի հատուկ մի փոխնակ:

«Գրական անկում» ժողովածուն հետաքրքիր է որպես նոր հոսանքների, նոր որոնումների նկատմամբ մարքսիզմի հակադեցություն: Մարքսիստները վախե-

նում էին, որ գաղափարական հողը փախչում է իրենց ոտքի տակից, եւ շտապեցին վարկաբեկել նոր գիտակցության ամրապնդման ցանկացած փորձերը: «Կոտրված հասարակության մեջ հարույն տվեցին միստիկական իդեալիզմի տարբեր ձևերին: Ավելացավ հետաքրքրությունը դեպի կրոնական խնդիրները. հավաստի նշան հոգեւոր անկման եւ քաղաքական հակադեցության: Երեկվա հեղափոխականներն ու աթեիստները սկսեցին բազմություններով խառնվել «կրոնափիլիսոփայական հանրության» նիստերին («Կրոնափիլիսոփայական հանրությունը» ստեղծվել է Պետերբուրգում 1907 թ. եւ տեւել մինչեւ 1917 թ.: Տե՛ս նաեւ Ս. Մ. Բերդիաև. *Философские и религиозно-философские общесства*) եւ այստեղ քահանաների եւ Զրիստոսով խենթացած ճիզվիստների հետ վարեցին անվերջանալի եւ անմիտ բանավեճեր՝ «կրոնաբարոյական» անթիվ-անհամար հարցերի շուրջ: Այդ բռի խոսքերը, որոնցում կրոնական խնդիրների նկատմամբ հետաքրքրությունը հայտարարվում է բարոյական անկում, կրոնաբարոյական հարցերը բացահայտ ընդունվում անմտություն, վկայում են լոկ մի բանի մասին. սոցիալ-դեմոկրատներն զգում են, որ գործերը վատ են: Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել: Եվ «Գրական անկումը» հենց մեր գրական սոցիալ-դեմոկրատիայի վարչական միջոցառումն է:

Այս ժողովածուն դիմագուրկ է. բոլո-


«ԳՐԱԿԱՆ ԱՆԿՈՒՄ»-Ի ՄԱՍԻՆ



րը խոսում են նույն բանի մասին եւ նույն բառերով, հեղինակներին հնարավոր չէ ճանաչել, նրանք բոլորն էլ կարող են ստորագրել Իվանով, Պետրով կամ Է. Սեմյոնով կոլեկտիվ ծածկանունով: Ի դեպ, կան չափազանց թույլ հոդվածներ, ինչպիսիք են պարոնայք Ստեկլովինը եւ Մորոզովինը, իսկ պարոնայք Բազարովի եւ Յուլյենիչի հոդվածներն ավելի պատշաճ են, ավելի խելամիտ: Մարքսիստական այս ժողովածուն մարքսիստական «գաղափարախոսության» մեկնության

ոչ միայն թերի, այլեւ զավեշտական եւ անմիտ լինելու փայլուն նկարագրություն է: Արվեստի ու փիլիսոփայության մեջ նոր հոսանքները, կրոնական թեմաների նոր դրվածքն իրականում բացատրվում են որպես հետադիմական եւ բուրժուական: Սակայն «բուրժուականությունը», «հետադիմությունը» ընդհանուր ու դատարկ խոսքեր են, իսկ իրականության ցանկացած կոնկրետացում ու մանրամասնում, ուզածդ մոտեցում ծնում է հակասություն եւ ավարտվում զավեշտով: Գրական անկումն անարժեք մի խոսք է, որով նույն երեւույթը բնութագրվում է խիստ բազմազան եւ անգամ հակասական. դա սոցիալական փլուզումի արդյունք է: Իսկ ի՞նչն է մեզ անում փլուզվում: Այդ «փլուզումը» մարքսիստները կապում են «բուրժուազիայի» հետ. ըստ մարքսիզմի՝ ցանկացած փլուզում այժմ պետք է վերագրել բուրժուազիային: Ամաչե՛ք իրականությունից, երկյուղե՛ք ճշմարտությունից: Ռուսաստանում բուրժուազիան չի փլուզվում, նրան փլուզում չի սպառնում նույնիսկ մարքսիստական սխեմայով: Մեզանում նոր է միայն սկսվում կապիտալիստական ժամանակաշրջանը, նոր է միայն ձեւավորվում բուրժուականը, այն դեռեւս բարուրում է, եւ եթե մարքսիստական սխեման ճիշտ է, ապա նրան սպասվում է դեռեւս երկար զարգացման ընթացք, իսկ ծաղկումն առջեւում է:

Շարունակությունը՝ էջ 8



Մայքլ Առլեն Ավագ

Սկիզբը՝ թիվ 20-21

Առլենը, տրվելով իր մարտաշունչ բնագծերին, հմայված է հայ ռազմիկների մասին հին պատմություններով, ինչպես նաեւ՝ անցյալի մարտական սխրանքները ներկայացնող պատումներով (տե՛ս Michael J. Arlen, Նույն տեղում, էջ 77): Բայց եւ այնպէս գրողը չի կենտրոնանում սոսկ հայ ազգի հերոսական անցյալի վրա: Նրան հետաքրքրում եւ հուզում են նաեւ իր ժողովրդի անհաջողություններն ու ձախողումները: Առլենը մի փոքր պատմական էքսկուրս է կատարում՝ ցույց տալով, թե ինչպէս է քրիստոնյա հայը հպատակվել ու հավատարմորեն ծառայել իսլամադավան թուրքին: Չետզիտե ամերիկահայ գրողի ուսումնասիրությունը մոտենում է արդի ժամանակներին: Նա հպանցիկ ներկայացնում է ցեղասպանությունից փրկվածների սրտամորմոք ընդվզումները. «Օ՛, այդ չարաբաստիկ կոտորածները, մտածեցի ես: Այդ ազգայնամոլությունը, դժբախտությունն թերող ազգայնամոլությունը» (տե՛ս Michael J. Arlen, Նույն տեղում, էջ 79): Թերեւս սխալ չի լինի ենթադրել, որ սփյուռքահայ գրողն իրականում խոսում է ոչ միայն հարազատ ժողովրդի, այլեւ այլ ազգերի խնդիրների մասին. չէ՞ որ «ցեղասպանություն» եւ «այլատեցություն» երեւոյթներն իրենց բնույթով համամարդկային եւ համաշխարհային են: Ուստի եւ ամերիկահայ գրողը նշված արտավոր իրողությունները քննում է գլոբալ տեսանկյունից եւ ոչ թե՛ նեղ ազգային: Ցանկացած շրջայնահաց ու հեռատես գրող, թերեւս, հենց այսպէս կ'ուսաքա-

ներ անհանդուրժողականության, ազգայնամոլության եւ ցեղասպանության երեւոյթները:

Հատուկ ուշադրության է արժանի այն, թե ինչպէս է սփյուռքահայ գրողը պատկերում եւ ինչ գնահատական է տալիս այն ազգին, որն իր զագրելի, եղերական արարքներով բարոյական ապտակ հասցրեց ողջ քաղաքակիրթ մարդկությանը եւ անհատուցելի ու կործանարար վնաս պատճառեց համայն հայությանը: Առլեն Կրտսերի բնորոշմամբ՝ թուրքերը հմուտ սադրիչներ էին, որոնք մի խորամանկ խաղ էին խաղացել հայերի գլխին: Նրանք օգտագործել էին հայերի բողոքները՝ թուրք խառնամբոխին բորբոքելու համար (տե՛ս Michael J. Arlen, Նույն տեղում, էջ 176): Ասվածից պարզ է դառնում, որ Առլենն ավելի շատ քննադատում ու դատապարտում է ոչ թե շարքային թուրքերին, այլ՝ թուրքական վերնախավին, քանի որ հենց նա էր սադրել ու կազմակերպել հայոց կոտորածները: Այդ սադրիչների առաջին շարքում էր կանգնած Թուրքիայի ներքին գործերի նախարար եւ հայոց ցեղասպանության ճարտարագետ Թալեաթ փաշան, որը ցինկաբար հայտարարել էր. «Մեզ մեղադրում են նրանում, որ մենք չենք տարբերակել իրարից անմեղ հայերին մեղավոր հայերից, բայց դա գործնականում անհնար էր, քանի որ այսօրվա անմեղ հայերը կարող էին վտանգավոր լինել վաղը» (տե՛ս Michael J. Arlen, Նույն տեղում, էջ 234): Թալեաթ փաշայի այս խոսքերը կարելի է որակել կա՛մ իբրեւ մտագարության նշան, որն արտահայտվում է հիվանդագին կասկածամտությամբ, կա՛մ էլ իբրեւ սեփական ոճիրն արդարացնելու եւ պատասխանատվությունից խուսափելու անհաջող փորձ:

Խոսելով ցեղասպանության հանգամանքների մասին՝ Առլենն այդ ոճրագործությունը բնորոշում է որպէս քաղաքական բռնության հետ շաղկապված արդի հարաբերությունների առաջին հաղթանակ: Լինելով ժամանակակից լրատվության քննադատ՝ Առլենն առանձնապէս զգայուն է այս սատանայական համաձայնագրի հետեւանքների հանդեպ եւ նկատում է, որ թուրքերը, վերահսկելով

ներքին եւ արտաքին կապերը, կարողացել են պառակտել հայերին աշխարհից եւ Նույնիսկ միմյանցից (տե՛ս Michael J. Arlen, Նույն տեղում, էջ 244):

Ուշագրավ է, թե ինչպէս է Մայքլ Առլեն Կրտսերը գնահատում ու ներկայացնում ցեղասպանության զոհ դարձած հայ ազգի հոգեբանական կացությունը. հայերը հոգեպէս թուլացած են եւ ընկճված: Եվ սա այն դեպքում, որ նրանք իրենց էության մէջ սկզբնաւ խրոխտ էին ու էքստրովերտ: Ամերիկահայ գրողը եզրակացնում է, որ հայերին կոլեկտիվ ընկճախտ է համակել. «Ունա՛կ է արդյոք հայ ազգը չդրսեւորել անտարբերության նշաններ, ունենալ փայլ աչքերում, ունենալ ապրելու ցանկություն եւ առավոտյան վեր կենալուց հետո մտածել Նոր ու ավելի լավ աշխատանք գտնելու մասին» (տե՛ս Michael J. Arlen, Նույն տեղում, էջ 169): Անկախ այս անգործության զգացողությունից՝ նա իր մեջ ինչ-որ գերբնական ուժ է զգում՝ նայելով մի երգրումցի վաճառականի դիմանկարին: Նա նմանություն է տեսնում այդ վաճառականի եւ իր հոր միջեւ: Երգրումցի վաճառականի աչքերը «վառվում են» սառած դեմքի վրա, իսկ նրա եռանդն ուղղված էր դեպի հոգու խորքը. «Արդյո՞ք նա սրտնեղում է նրանից, որ ինքը երբեք չի դառնա իր երկրի տերը եւ որ թուրք հարեւաններն իր որդուն երբեմն «գալուր» - «անհավատ» են կոչում» (տե՛ս Michael J. Arlen, Նույն տեղում, էջ 140):

Շարունակելով լուսաբանել ցեղասպանության հետեւանքները՝ Առլեն Կրտսերն առաջ է քաշում Նույն հարցերը, որոնք արդեն արծարծվել էին Փիթեր Նաշարյանի «Ուղեւորություններ» վեպում: Այդ հարցադրումներից մեկը հետեւյալն է. ինչպէ՞ս կարող է շարդերից փրկված հայը հուզական առումով արդարացնել իր փրկվելու փաստը: Մեղքի զգացումը մի տեսակ առանցք է դառնում հիշողության եւ վերածննդի միջեւ: Այդ զգացողությունն էլ ավելի է ծանրացնում հայի՝ առանց այն էլ ծանր հոգեվիճակը: Ամերիկահայ արձակագիրը եզրակացնում է, որ բացահայտորեն դրսեւորված հույզերի վիթխարի զանգվածը վերջ ի վերջո պետք է հանգեցնէր ինքնաատելության:

Թվում է, թե հայերի գործողություններն ավելի շատ ուղղված են իրենց իսկ դեմ, քան թե՛ թուրքերի: Ինչեւէ, ասվածից թող չստեղծվի այն թյուր տպավորությունը, թե հայերը չարացած են սոսկ միմյանց դեմ եւ ոչ մի ատելություն չեն տածում եւ դեռնագործ ազգի հանդեպ: Բնավ՝ ո՛չ: Դրա մասին են վկայում թուրքերի դեմ ուղղված կտրուկ, խարազանող ճառերը եւ ցասման պոռթկումները, որոնք անցել են երեք սերունդների միջով (տե՛ս Michael J. Arlen, Նույն տեղում, էջ 248):

Որքան էլ որ Առլեն Կրտսերը խոսում է Մեծ եղեռնի մասին, միեւնույն է, նրան չափազանց հուզում է ազգային ինքնությունը վերագտնելու հիմնախնդիրը: Իր էթնիկ ինքնությունը բացահայտելու նպատակով Առլենն այցելում է Խորհրդային Ռուսաստան, որտեղ նա հնարավորություն է ստանում ծոնաթանալու տեղի յուրօրինակ մշակույթին: Օտարերկրյա զբոսաշրջիկը Երեւանի թանգարաններում շատ զարմանահրաշ ստեղծագործություններ է տեսնում, մասնավորապէս այն, թե ինչպէս են մեկ ասեղի անցքի մեջ ամբողջական պատմություններ փորագրված, իսկ քարի կոպիտ ծալքերի ներքո կարելի է տեսնել Ավետարաններ, որոնց չափերն ավելի մեծ չեն, քան՝ երկու բթամատերի չափսերը (տե՛ս Michael J. Arlen, Նույն տեղում, էջ 115): Այս գործերի սաստիկ նրբագեղությունը նրան հիշեցնում է Նյու Յորքում բնակվող մի ծեր ամերիկահայի տանը տեսած փոքրիկ փորագրված տուփերը:

Երեւանում եղած ժամանակ ամերիկահայ գրողը տեսնում է նաեւ հայաստանցի կանանց եւ շատ յուրօրինակ ձեւով բնութագրում նրանց: Խոսքը մասնավորապէս վերաբերում է Բառապի դուստրերին. «Ես երբեւէ չէի տեսել նման կանանց. նրանց մաշկը նման է փղի մաշկի, իսկ աչքերը՝ արջի աչքերի» (տե՛ս Michael J. Arlen, Նույն տեղում, էջ 79): Ավելի ուշ Առլենին դուր եկան Ռայաստանի կանայք. նրանց ազնվական կեցվածքը, հյուծված արժանապատվությունը եւ ամուսնացած կնոջ խիստ տպավորիչ հմայքը (տե՛ս Michael J. Arlen, Նույն տեղում, էջ 146):

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սկիզբը՝ էջ 4

Գ. Տեր-Գրիգորյանը երգիծական հայացքով է ներկայացնում իրականությունը: «Մեռնող ֆլորան» (1962) նա բնութագրել է իբրեւ «դրամատիկական պամֆլետ» եւ իր հերոսներին կերտել բուսական աշխարհի առանձին ներկայացուցիչների տեսքով: Բնակկառավարչության լիազորության շրջանակներում կատարվող դեպքերի գլխավորը Պարտիզպանն է (տնային կառավարիչ), իսկ գործողություններին մասնակցում են ժանտափուշը (քննադատ), Աստղափուշը (զաղափարագուրկ կին), Խոտուտիկը (լեզվաբան) եւ այլք: «Մեռնող ֆլորա» վերնագիրն ինքնին խորհրդանշում է անկում: Ասպարեզը տրվում է կյանքի մոլախոտերին, որոնց կրքերը սրվում են բնակչահագործման գրասենյակի տնօրինության ներքո գտնվող ազատված բնակարանին տիրանալու առավել հնարամիտ ձեւեր որոնելու ընթացքում: Կերպար-խորհրդանշաններն ինքնին հուշում են գրոտեսկային վիճակներ ու հարաբերություններ, բայց եւ հեղինակը երբեմն անհարկի կոպտացնում, անգամ գեեհկացնում է խոսքը: Ժանտափուշն ասում է. «Նոր լույս տեսած գրքերի մեջ ջարդելու բան չկա՞, որ ռեցենզիա գրենք՝ ու-

ղեգրի արժեքը դուրս գա» (էջ 237), իսկ Աստղափուշն էլ շարունակում է. «Խորամանկ որ լինեի, հիմա վաղուց էի կոմպոզիտոր դարձել» (էջ 252): «Հաջի Փայլակ»-ում հերոսներից մեկը գիտականերին բնութագրում է «ակադեմիայի դագեր» «մեծարանքով»: Սա արդեն երգիծանք չէ, այլ՝ հայիոյանք:

Նույն գրոտեսկային սրվածությունն առկա է «Ա՛խ, ներվե՛ր, ներվե՛ր» (1968) «անմեղ գրույցում»: Հիվանդանոցի նյարդային բաժանմունքի միեւնույն հիվանդասենյակում բուժվում են թերթում խիստ քննադատված տրեստի կառավարիչ Հակոբ Ջուլիկյանը եւ... հողմվածագիրը՝ լրագրող Արշակ Պարթեւը: Դեպքերին մասնակցում են սրանց կանայք, բժիշկներ, հիվանդներ: Ծայր են առնում փոխադարձ կսմիթներ, ստեղծվում սուր վիճակներ, բայց եւ ամեն ինչ ավարտվում է հակառակորդների «բարեկամությամբ»: Այստեղ եւս շարունակվում են ծիծաղ կորգելու գեեհկության հասցված Նույն «սրամիտ» ձեւերը: Հակոբը խոսում է իր ենթակայի հետ. «Հարյուր տարեկան որ դառնամ, մերկ պարուհին ինչի՞ս է պետք»: Վերջինս պատասխանում է. «Բայց խոսքը մեր մեջ, լավ բան են այդ անպիտանները: Մանավանդ երբ ոտ-

քերն եսպես բարձրացնում են» (էջ 293): Գրոտեսկային է երկու հիվանդների վրա հոգեբանական փորձ դնող հայցորդի կերպարը, որը եւս հեշտ ծիծաղի հարուցիչ է:

«Հաջի Փայլակը» (1973) հեղինակը բնութագրել է իբրեւ «երգիծական հրապարակախոսություն»: Ներկայացված են ազգային կյանքով, ժողովրդի պատմական ճակատագրով մտահոգված մտավորականների կերպարներ: Նպատակը, այսպէս ասած, կեղծ ու շիտակ հայրենասիրության տարբերակումն է, սուտ ու սթափ հայրենասերների պայքարի պատկերումը: Հավասարապէս ծաղրված են երկու թեւերի ներկայացուցիչները (Արա Սասուն, Հարութ Անվերջ, Լուսարփի, Մուկուչ Ասողիկ, Միշել Աստուհի): Դա պայմանավորված է դեպքերի ընթացքով եւ ստեղծված մթնոլորտով: Խոսքի մեջ են ներքաշված Հայաստանն ու Սփյուռքը, պատմությունն ու ներկա օրը: Ծիշտ թիրախ ունենալով զավառական հայրենասիրությունը՝ հեղինակի երգիծանքը թուլանում է, երբ իր ծիծաղելի հերոսների հետ գիտակցաբար միավորում է եւ բուն ազգային մտահոգությունները: Հեղինակն անցնում է թուլատրելի սահմանը. հարվածում է գոտկատեղից




Գ. Տեր-Գրիգորյան (Գրիգ)

ներքեւ՝ մի պահ անգիտանալով, որ ծիծաղելին ոչ թե Նյուլթն է (հայրենիքը), այլ՝ մարդիկ (դատարկամիտ հայրենասերները):

Հենց այստեղից էլ շարունակվում են նախորդ գործերում նկատված կոպտությունն ու գեեհկությունը՝ այս անգամ նշավակման առարկա ունենալով հեշտությամբ երգիծանքի չտրվող հայրենասիրությունը: Իբր թե պատմաբան պրոֆեսորը «քսան տարի շարունակ քարեր է հավաքում հողագնդի այն բոլոր ծովերից ու ծովածոցերից, ուր լողանում են աշխարհասփյուռ հայորդիները» (էջ 355):

Շարունակությունը՝ էջ 7



Գ. Հարությունյան

Սկիզբը՝ էջ 6

Ծաղրված է սփյուռքահայության կարոտը մայր հայրենիքի հանդեպ (սփյուռքահայ Չավեն Մոմոչի լացակումած խոսքը Հայաստանի հեռուստատեսությամբ), Լուսարփիի «Հայրկատու» հավաքածուն, որ նշանակում է «Հայրենյաց կատու»։ Իբր թե Սփյուռքում բավականին երեւելի մի դեմք «սրբազան խոստ» է արել ուղի չղկել Հայաստան՝ մինչեւ չհայտնաբերվի վերջին հայրենյաց կատուն» (էջ 358), որով զբաղված է Լուսարփին։

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ծաղրված է հայ ժողովրդի սրբազան գործիչներից մեկին՝ Անդրանիկ զորավարին պանծացնող երգը, որի մոտիվներով ստեղծվել է հնարածին սփյուռքահայ նկարիչ Հաջի Փայլակին նվիրված ծաղրանմանությունը։ Հաջի Փայլակ անունը ստի ու չեղյալի մարմնացումն է, որ հայտնվում է մի անտաղանդ նկարի տակ եւ կեղծ հայրենասիրությունից դրոշմված՝ սրբացվում։ Սա ըստ ամենայնի երգիծանքի նյութ է։ Բայց ամենեւին էլ երգիծանքի նյութ չէ ժողովուրդը, որը դարասկզբի դաժանագույն դեպքերի բերումով ստիպված տարագրվեց հայրենիքից։ Այս կարեւորագույն հարցերը հստակ դրված չեն եղել թե՛ բեմադրության օրերին եւ թե՛ հետո առաջ են բերել սուր տարաձայնություններ։

Հեղինակի վերաբերմունքն արտահայտված է Միշել Անտուինի այս մենախոսության մեջ. «Ո՞րն է ձեր սրբությունը, բարձրապատիվ տիա՛րը եւ տիկնա՛յք, գուցե այն, որ ազգամեծար մագիլներով ճանկոտում եք ձեր սուրբ պապերի շիրմաքմբերը եւ հետո նախնյաց ոսկորները

մեկիկ-մեկիկ վաճառում հետնորդներին։ Դա՞՞ է սրբությունը։ Կամ գուցե այն, որ ապրում եք ու սնվում նույնիսկ ձեր ազգային ողբերգության հաշվին եւ անվերջ հեծկլտալով նրա բեկորների վրա՝ «Սփյուռք-Սփյուռք» խաղում։ Խաղում եք մոլի։ Անգիշում։ Մեկը Հաջի Փայլակ է ձեռք գցում, որ հետո ազգային շուկայում տասնակի վաճառի, մյուսը՝ ազնվագարմ կատու» (էջ 385)։ Այսքանից հետո մնում է հարց տալ հեղինակին. արժե՞ր արդյոք ամեն ինչ ծայրահեղացնելով՝ ծաղրել եւ ապա տեղ տալ այս մենախոսությանը, որն ամբողջովին կեղծ է շահարկվող սթափություն ունի։ Դրա համար իրական հիմք չկա, ինչը եւ մեծապես գցում է այս «երգիծական հրապարակախոսության» գեղարվեստական արժեքը։ Այս կատակերգություններում գեղարվեստ ընդհանրապես չկա։

«Ցավերգություն» բնութագրված «Առանց այլանդակի» (1974) եւ «Ժամանակակից հեքիաթ» համարված «Չգուշացեք, նա դեռ կա» թատերգություններում եւս Գ. Տեր-Գրիգորյանն անդրադառնում է ժա-

մանակակից կյանքի արատներին։ Առաջինում կառավարչի տեղակալ նշանակվելու համար պայքարի մեջ է մտնում երեք բաժնի վարիչ, հաջողությամբ մերկացնում մեկը մյուսին՝ ի հայտ բերելով նաեւ իրենց բուն էությունը։ Դա կատարվում է թերթի աշխատակցի մասնակցությամբ, որը եւ պատռում է նրանց դիմակները։ Հաջորդում, որը գրված է Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազարի» «ինտոնացիայով»՝ ներկայացված է մարդկային հասարակությունից անբաժան քաջնազարականության էությունը։

Կատակերգության սահմաններում երգիծանքն ու քննադատությունը Գ. Տեր-Գրիգորյանը տարածում է բոլոր հերոսների վրա։ Գրոտեսկային իրավիճակներում երբեմն ցուցադրաբար ծայրահեղացնելով քննադատությունը՝ նա հասնում է բացասական արդյունքի՝ թուլացնելով խոսքի ներգործման ուժը։

Շարունակելի


Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հաղարծին վանքի 19-րդ դ. վանահայր վարդապետ Տեր-Մարգարյան (1830-1896)

Սկիզբը՝ էջ 5

Իր երեսուն եւ ավելի տարիների աշխատանքի շնորհիվ վերականգնել է վանքի գործունեությունը, ստեղծել լավ տնտեսություն, ձեռք բերել եւ բազմացրել շուրջ 136 գլուխ մանր եւ խոշոր եղջերավոր անասուն, մեղվի 60 ընտանիք պահել։ Ջրաղաց է պատրաստել, այն աշխատեցնելու համար լեռների միջով ջուր բերել, որի ընթացքում՝ ժայռաբեկոր պայթեցնելու ժամանակ, աջ ձեռքի բուրձ մատը կորցել, անասնագույն, ապրելու համար խցեր պատրաստել եւ այլն։ Օրինակները շատ չատ են։ Վանահոր աշխատանքների շնորհիվ ձեռք բերված բարեփոխումներն արժանի են համապատասխան գնահա-

արվեստի, գրականության ներկայացուցիչներ։ 1887 թ. գրող Պերճ Պոռոյանի հետ վանք են գալիս մեծանուն գրող Ռաֆայել Պատկանյանը, դերասան Աբրահամյանը եւ այլք։ Իր տպավորությունների մասին Ռ. Պատկանյանը գրում է. «Մի քանի ժամից հասանք հոյակապ անտառով շրջապատված պատվական վանքը, տեսա հռչակավոր Պողոս վարդապետին եւ նրա կտուրի տակ մի գիշեր անցուցի։ Նա պատմեց, որ բնակություն է հաստատել վանքում 1862 թվին եւ կամաց-կամաց կենդանություն տվել վանքին։ Այժմ Հաղարծինը բավականին հարստություն ունի»։ Զյուրդնկալության ընթացքում տեղեկանում է շատ բաների մասին, հիանում



նրա տակ էլ մի գանգակ՝ 32 կգ կշռով։ Պողոս վարդապետին ենք պարտական այդ արժեքավոր գտածոյի համար (այժմ այն պահվում եւ ցուցադրվում է Երեւանի պատմության թանգարանում)։

Վանքի կալվածքները՝ հողատարածքներն ու անտառը, ետ վերադարձնելու տարիների պայքարն իշխանությունների հետ վերջանում է անարդյունք։ Նա վճռում է, որ խնդիրը կլուծվի միայն Բարձրագույն Սենատի միջոցով։ Այդ նպատակով նա, Էջմիածնի թույլտվությամբ, 1895 թվին մեկնում է Սանկտ Պետերբուրգ։ Մայրաքաղաքում այդ ժամանակ նախապատրաստվում էին Նիկոլայ Երկրորդի թագադրության աշախտանքներին։ Թեւեւ այստեղ բոլորը զբաղված էին այդ կարեւոր միջոցառման խնդիրներով, գտնվեցին մարդիկ, որոնք անհրաժեշտ աջակցություն ցույց տվեցին նրան։ Առաջինը ցարական բարձրագույն օրգաններում պատասխանատու պաշտոն, դիրք եւ հեղինակություն վայելող հայագի Կարապետ Եզյանն էր, մյուսը՝ սենատոր Գոնչարովը։ Այստեղ ինն ամիս չարքավելուց հետո հայր սուրբը հասնում է բաղձալի հաջողության։ Սենատը հոգուտ Հաղարծնի վանքի է հաստատում 700 դեսյատին հողատարածքներ՝ իր անտառներով։

Է։ Չնայած սրբազանի խնամատարությանը՝ շաբաթ գիշեր Պողոս վարդապետն ավանդում է հոգին՝ խիստ վիշտ պատճառներով միաբան եղբայրների եւ լայն հասարակությանը։ Մահվան գույժը տարածվում եւ հասնում է Մոսկվա, Պետերբուրգ։ Ստացվում են ցավակցական հեռագրեր, իսկ նրան ճանաչող մեծանուն մարդիկ հանդես են գալիս եւ կրկին անգամ մամուլի միջոցով ներկայացնում ու բնութագրում նրա երկարամյա (35 տարվա) գործունեությունը։

Հանգուցյալ Պողոս վարդապետ Տեր-Մարգարյանի թաղումը տեղի է ունենում Էջմիածնում, որի առիթով Մայր տաճարում Խրիմյան Հայրիկի մասնակցությամբ կատարվում է հանդիսավոր պատարագ։ Սուքիաս արքեպիսկոպոսը, դրվատելով հանգուցյալի արժանիքները, շեշտում է. «Միմիայն նրա անխնայ աշխատանքին է պարտական այսօր Հաղարծնի վանքը իր կալվածքներով եւ բարեշինությամբ»։ Հուղարկավորությունը կատարվում է Էջմիածնի միաբանության հանգստարանում։ Գերեզմանի վրա դրվում է հուշաքար՝ հետեւյալ արձանագրությամբ. «Բազմաշխատ վանահայր Հաղարծնյ վանքի Պողոս վարդապետ Տեր-Մարգարեան, վախճանեալ ի 2 Նոյեմբերի 1896 ամի»։ Այդ պահից անցել է շուրջ 117 տարի։ Թեւեւ ոմանց կարծիքով նրա աճյունը թաղված է Հաղարծնի վանքում, սակայն պետք է շեշտենք, որ դա իրականությանը չի համապատասխանում. նա թաղված է Էջմիածնի միաբանության անդամների հանգստարանում։

Այս տարի լրանում է Հաղարծնի վանահայր վարդապետ Տեր-Մարգարյանի ծննդյան 183 տարին, թող այս ակնարկը նվիրվի նրա խնկաբույր հիշատակին։

Յերիկ ԽԱՍԱՏՅԱՆ



տանքի։ Բացի սեփական տնտեսություն ստեղծելուց՝ նա ժողովել է բազմաթիվ հոգեւոր սուրբ մասունքներ, որոնք նվիրաբերել են եպիսկոպոսներ Գեորգ եւ Մատթեոս Վեհապետյանները, Հովհաննես Ալախյանը, Թադեոս Զյունականը, այցելությունից ստացել բազմաթիվ ոսկեզօծ ու արծաթյա խաչեր, տարբեր սրբապատկերներ, եպիսկոպոսական գավազաններ եւ այլն։ Շուտով Պողոս վանահոր անունը տարածվում է, անգամ հասնում Մոսկվա եւ Պետերբուրգ եւ այլուր։ Տարբեր վայրերից վանք են գալիս բարձրաստիճան հոգեւորականներ, մշակույթի,

վանքի շրջապատի անտառներով, մաքուր օդով եւ այլն։ Մեծ գրողը, լսելով նրա պատմությունները, ասում է. «Իմ կարծիքով, Էջմիածինը ամեն ճիգ պիտի թափէ, որ ձեռքից բաց չթողնէ նորան։ Կգա օր, երբ Հաղարծինը միլիոններ պիտի գնահատվի։ Զլինի որ հիշյալ 1000 օրավար հողը կորչի սուրբ հարց իշխանութենից, շատ կափոսասնք»։

Հաղարծնի վանքում է 1884 թվին գտնվել 13-րդ դարի հայ վարդապետների ձեռքով պատրաստված պատմական պղնձե կաթսան, որն արժանացել է գիտնականների ուշադրությանը։ Այն կշռում է 350 կգ եւ


Մայիլ Առլեն Կրստեր եւ Մրա գրական գործունեությունը

Սկիզբը՝ էջ 6

Հարկ է հավելել, որ Առլեն Կրտսերը հորհրդային Ռուսաստան էր այցելել ոչ միայն արեւելահայությանն ու նրա մշակութային ժառանգությանը ծանոթանալու համար, այլեւ հայր-որդի հարաբերությունների մեջ հստակեցում մտցնելու նպատակով: Հարց է առաջանում, թե ինչպես կարող էր Հայաստան այցելել հարթել հայր ու որդի Առլենների հոգեբանական կոնֆլիկտը: Այստեղ հարկ է վերհիշել, որ հայր Առլենն օտարել էր ինքն իրեն եւ իր գավալին հայկական մշակույթից: Նմանօրինակ պահվածքն ըմբռնելու համար ակնհայտորեն անհրաժեշտ էր ներսից ծանոթանալ հայկական մշակույթին, ինչն առավել դյուրությամբ հնարավոր էր անել Հայաստան այցելելով: Հայաստանում եղած ժամանակ գրողը հուզական բանավեճի մեջ է մտնում իր ուղեկցողի հետ: Բանավեճի թեման թուրքերն էին: Սակայն խոսքն այստեղ միայն թուրքերին չէր վերաբերում: Ուղեկցողը մեղադրում է ամերիկահայ գրողին, որ նա ուզում էր հրաժարվել իր հորից: Սարգիսը համոզմունք է հայտնում, որ հայրենիք ու հայր հասկացությունները նույնական են, եւ որ Առլենը պարտավոր է հարգանքով վերա-

բերվել հարազատ հորը (տե՛ս Michael J. Arlen, նույն տեղում, էջ 136): Թերեւս կասկածից վեր է, որ Սարգիս դատողությունները ճշմարիտ են: Եթե նույնիսկ մի պահ ընդունենք, որ Առլեն Ավագը մոլորության մեջ է եղել, միեւնոյն է, նա հայր էր, ուստի արժանի էր հարգալից վերաբերմունքի՝ առնվազն հարազատ զավակի կողմից: Հայկական մտածելակերպի եւ արժեքավարձի կարեւորագույն առանձնահատկություններից մեկը հենց այն է, որ ժառանգն անկախ ամենից պետք է ակնածանքով վերաբերվի այն մարդկանց, ովքեր իրեն կյանք են պարգևել: Մի՞թե Առլեն Կրտսերի նման ականավոր մտավորականը չի գիտակցում այս պարզագույն ճշմարտությունը: Ըստ երեւոյթին՝ այո՛: Բայց եկեք խնդրենք մոտենանք այլ տեսանկյունից եւ ի վերջո հասկանանք Առլեն Կրտսերի վարքագծի շարժառիթները: Նա, լինելով սկզբունքային անձնավորություն, պարզապես չի կարողանում ներել իր հորը ստի ու կեղծիքի համար, նրա համար, որ նա իր զավակին մոլորության մեջ էր պահել ու թաքցրել այն ճշմարտությունը, որը կարելի էր նրա համար: Իհարկե, այն, ինչ արել էր Ավագ Առլենը, ուներ հստակ նպատակներ. գերծ պահել իր ժա-

ռանգին այն բարդություններից, որոնք բնորոշ են փոքր ազգերին, ինչպես նաեւ՝ ցեղասպանության ենթարկված ու պանդխտության մեջ հայտնված ժողովուրդներին: Ասվածից պարզ է դառնում, որ Ավագ Առլենի ապագային վարքագիծը միանշանակորեն բխում է նրա խոր մտահոգությունից՝ հարազատ զավակների ապագայի, նրանց ճակատագրի համար: Սակայն որդի Առլենը, լինելով երիտասարդ, ունակ չէ խնդրին մոտենալու համակողմանիորեն եւ հարցին նայելու ծնողի աչքերով: Նշենք, որ հայրեր-որդիներ կոնֆլիկտն այս կամ այն չափով առկա է եղել բոլոր ժամանակներում եւ հատուկ է բոլոր ազգերին: Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ տարբեր սերունդների մտածելակերպը, արժեքամակարգը, իդեոլոգիան ու ձգտումները որոշակիորեն տարբերվում են, ուստի եւ թյուրըմբռնումներն ու անհամաձայնությունները միանգամայն հասկանալի են եւ օրինաբար: Սակայն դրանք, որպես կանոն, ժամանակավոր բնույթ ունեն: Ժամանակն այն կարեւորագույն կատեգորիան է, որը կոչված է հարթելու առկա անհամաձայնությունները, ի վերջո ցույց տալու մարդկանց, թե որն է ճշմարիտը եւ որը՝ մոլորությունը: Իր պատմության վերջում



Մայիլ Առլեն Կրտսեր


Առլեն Կրտսերը հասնում է այդ կարեւոր ժամանակային կետին: Նա ներում է իր հորը ճշմարտությունը թաքցնելու համար եւ նրա հոգուն ազատություն պարգևում: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ Առլեն Կրտսերը կանգնած էր Մեծ եղեռնի նահատակների հուշահամալիրի առջեւ. ամերիկահայ գրողն ազատ է արձակում իր հոր հոգին դեպի այն հարթավայրը, որի վրա իշխում է լեռ-Աստվածը:

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Ն. ԲԵՐԴՅԱՆԷ

Սկիզբը՝ էջ 5

Ինչո՞ւ զարգացող, հույսերով լի բուրժուազիան, հանկարծ պարզվում է, ունի անկումային գաղափարախոսություն, որտեղից են բուրժուազիայի քայքայումն ու գրական, փիլիսոփայական, կրոնական անկումը: Ստացվում է՝ ինչ-որ բան՝ թե՛ սխեմայով եւ թե՛ կարգացուցակով, անհեթեթ է: Ժողովածուի հեղինակներն իրենք էլ են զգում, որ այստեղ ինչ-որ բան այն չէ, եւ իրենց բացատրություններում անընդհատ ցատկում են բուրժուազիայից քաղքենիություն, քաղքենիությունից՝ ֆեոդալական պալատականություն, պալատականությունից՝ մտավորականություն: Իսկապես պալատականությունը, որպես դասակարգ, մեզանում կազմավորվում է, նրա ամեն ինչն անցյալում է եւ ո՛չ ապագայում, այդպես է իրականում, այդպես է եւ մարքսիստական սխեմայով: Սակայն արդի մեր գրականությունը, փիլիսոփայությունը, միստիկան ընդունել պալատական, դա արդեն նման է անհեթեթության հերկուլեսյան սյուների (իմա՝ գազաթնակետը -թրգ.): Իսկ ինչ վերաբերում է մեր խաղաքային քաղքենիությանը, մեր մանր բուրժուազիային, ապա դրանք առատորեն անդամներ են տրամադրում «ռուս ժողովրդի միությանը», որի գաղափարախոսությունը որոշվում է սեւիարյուրակային (ծայրահեղ հետադիմական) բնագիծերով: Հնարավոր է՝ մարքսիստական սխեմայով քաղքենիությանը հասու է դառնալ հեղափոխական ժողովրդավարություն, սակայն իրականում ստացվում է հակառակը, եւ այստեղ ոչինչ անել չես կարող: Մարքսիստական սխեմայով՝ անհատականությունը բնորոշ է միայն մանր բուրժուազիային, մանր սեփականատերերին: Եվ եթե պարզվում է, որ այժմ հինկականարարային մարգարեները մանր սեփականատերերի գաղափարախոսներն էին, ապա ես սիրով կհամաձայնեմ դառնալ այդ խավի գաղափարախոսը: Դժվարությունը միայն այն է, որ ես անհատապաշտ չեմ եւ պայքարում եմ անհատապաշտության դեմ: Մարքսիստների համար գոյություն չունեն դասակարգեր այնպիսին, ինչպիսին կան իրականում՝ իրենց ողջ բարդություններով ու կոնկրետությամբ, այլ գոյություն ունեն լոկ դասակարգերի «գաղափարներ» (համարյա պլատոնական իմաստով): Դասակարգերն ասես մտահաս էություններ են, որոնց հետ կարելի է գործառնություն կատարել՝ իրականությունից հեռու:



Մտավորականության մասին անհրաժեշտ է առանձնահատուկ խոսք ասել: Այդ խավը մարքսիստներին շատ տհաճություններ է պատճառում. վերջիններս ոչ մի կերպ չեն կարողանում հասկանալ, թե դրանք ինչ տարօրինակ սոցիալական կազմավորումներ են: Մեր սոցիալ-դեմոկրատները մերժում են մտավորականությանը եւ նույնիսկ դուրս մղում, սակայն իրենք հենց տիպիկ մտավորականներ են՝ վարակված մտավորական երեւալու ոգով, թեեւ առաջվապես կարող են կոչվել մտավորականական խմբակցություն: Սոցիալ-դեմոկրատները հեռու են աշխատավորներից, ժողովրդի լայն շրջանակներից եւ խորթ են նրանց: Մտավորականներն իրենց ուղն ու ծունծվ դժվարանում են սեփական սխեմայում մտավորականությանը համար-դեղ գտնել, մտավորականությանը դասում են մե՛կ բուրժուազիայի շարքին, մե՛կ էլ՝ պրոլետարիատի հատուկ տեսակին:

«Գրական անկման» հեղինակները գրական անկման մեղքը վերագրում են մտավորականությանը, կյանքի եւ մահվան սարսափների հանդեպ մտավորականության անզորությանը, մտավորականության անօգնականությանը: Սակայն ժողովածուի հեղինակները եւս ոչ պակաս ռուսական անօգնական մտավորականներ են՝ վախեցած հեղափոխության ներքին փլուզումից եւ արտաքին հզոր հակազդեցությունից, ավելո՞ված՝ կյանքի ու մահվան նկատմամբ հենց նույն վախից եւ կառչած՝ «պրոլետարիատին»

եւ մարքսիստական միսթերիչ տերմինաբանությանը՝ հանուն ինքնամիսթերիանքի, որպեսզի իրենց համար ստեղծեն ուժի, կայունության պատրանք, հզոր ապագայի հույս:

Նոր բառիկներ գտան բացատրելու այդ անտանելի, խանգարող, ոչնչացնող նոր հոսանքը՝ ուրբանիզմը: Մեծ Զառաքը (մեծատառով), նրա յուրօրինակ մթնոլորտը, նրա կտրվածությունը բնությունից, նրա՝ Նյարդային համակարգը խախտող ազդեցությունն են ծնում «մոդեռնիզմը», արթնացնում ձգտում դեպի միսթիկա, դեպի իրական միավորման փոխարինումը կեղծ, խորհրդապաշտական միավորումի: Ուրբանիզմի մասին բոլոր այդ խոսակցություններում որոշակի ճշմարտություն կա, սակայն այդ ճիշտը դեռեւս մարքսիզմի մենաշնորհը չէ: Իսկ «միսթիկները» քիչ բան չէին կարող ասել ժամանակակից քաղաքի, նրա բնությունից կտրված լինելու, անհատի վրա քաղաքային կապիտալիզմի ճշման մասին, նույնիսկ նրանք բոլորն էլ այդ մասին մարքսիստներից վատը չեն ասում, սակայն ի՞նչ է այստեղից բխում:

Ընդունենք, որ մեծ քաղաքի մթնոլորտում է ծնվում հակումը դեպի միսթիկա (ժամանակակից): Դրանով միթե վարկաբեկվո՞ւմ է այդ հակվածությունը: Կարելի է նույնիսկ հաստատել, որ «միսթիկայի» հանդեպ հակվածությունը՝ ծնված ուրբանիզմի՝ սնող միջավայրում, հենց այն առողջ բնագիծ է, այն առողջ ծարավն է Տիեզերքի հետ միավորման, առողջ ծարավը քաղաքային կապիտալիզմի մամլիչից անհատականության ազատության: Զառաքը գյուղի վերածելու, ողջ աշխարհը մի մեծ գյուղ դարձնելու ձգտումն առողջ ձգտում է: Բարձր մշակութային հենքի վրա համաշխարհային, տիեզերական գյուղ կառուցելու ձգտումը հենց համաշխարհային պատմության խնդիրն է: Սակայն արդյո՞ք լավատեսական ու եմպիրիկ հենքի վրա է իրագործելի այդ նպատակը: Արդյո՞ք ողջ աշխարհը չի վերածվի ֆաբրիկայի: Մարքսիստների կողմից բոլոր նոր ստեղծագործությունները, բոլոր նոր որոնումները բացատրվում են մոտալուտ կործանումի զգացողությամբ: Իսկ որտե՞ղ է ճշմարիտ նոր ստեղծագործությունը, ապագայի ստեղծագործությունը: Պրոլետարական ստեղծագործությունը մենք չենք տեսնում, պրոլետարների եւ նրանց գաղափարախոսների կողմից կյանքի բոլոր արժեքները, ողջ ոգեղենությունը փոխանված են բուրժուազիայից եւ բուրժուական մշակույթից: Մատերիա-

լիստական փիլիսոփայության արժեքները, օգտապաշտ բարոյականությունը, բնապաշտական արվեստը, տնտեսական արտադրողականության, հավատի եւ երազանքի մեթոմֆի արժեքները բոլորն էլ բուրժուական արժեքներ են՝ ստեղծված պատմության բուրժուական շրջանում: Պրոլետարական սոցիալիզմը բուրժուալուսավորչական գաղափարներից ոչ մի քայլ առաջ չի գնացել, ոչինչ սեփական չի ստեղծել, ամեն ինչ ստրկորեն փոխառել է հենց նույն՝ անիժյալ բուրժուական աշխարհից: Խոսում եմ պրոլետարիատի «սոցիալիստական գաղափարախոսությունից», բանի որ հենց ինքը՝ պրոլետարիատը, ինքը՝ աշխատավոր ժողովուրդը, ապրում են այլ կյանքով, եւ զանգվածները դեռեւս ապրում են կրոնական կյանքով եւ առանց կրոնական արժեքների ապրել չեն կարող: Աշխատավորները դեռեւս զանգվածաբար քրիստոնյա են՝ կաթոլիկներ, ուղղափառներ կամ բողոքականներ, լիարժեք չգիտակցված ու հին գիտակցությամբ քրիստոնյաներ: Եվ այդ քրիստոնեական արյունը մեծ արգելք է զանգվածների սոցիալ-դեմոկրատական «լուսավորության» ճանապարհին: Եվ երբեք սոցիալ-դեմոկրատները չեն կարող բարձրացնել աշխատավորական զանգվածներին դեպի մեծ գործերի՝ հանուն մի դասակարգի նյութապաշտական «լուսավորչական» շահերի: Բնագիծերը կարելի է բորբոքել, սակայն միայն բնագիծերով չի կարող ապրել մարդը, եւ ոչ մի ժողովուրդ չի կարող ապրել:

Շարունակել
Ուսերենից թարգմանեց
Ս. ՄԱՆՈՒՅԱՆԸ

ԵՐԻՍՏՈՆՅԱ ՅԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր.

29.11.2013 թ.

Տպագրանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ